ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն զեկույցը մշակվել է «Արժանապատիվ աշխատանք հիմա» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, Հասարակական հետազոտությունների առաջատար խմբի, «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոնի կողմից՝ «Կրթություն և համերաշխություն» արհմիության հետ համատեղ:

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀՏԴ 349.2(042.3)
ԳՄԴ 67.405.1
Բ 898

Փորձագետ՝ Վարդուհի Ավանեսյան
Գրախոսներ՝ Սոնա Այվազյան, Նարինե Նուշերվանյան
Պատասխանատու խմբագիր՝ Քրիստինե Մարգարյան

Բ 898 **Բռնի տեղահանված արցախցիների զբաղվածությունն ու աշխատանքային իրավունքների իրացումը Հայաստանում.-** Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024.- 44 էջ:

Հետազոտությունն ուղղված է բռնի տեղահանված արցախցիների զբաղվածության և աշխատանքային իրավունքների իրացման հնարավորությունների, ծագած խոչընդոտների ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով աջակցել պետությանը հնարավորինս հասցեական և արդյունավետ ծրագրեր մշակելու ու իրականացնելու, բռնի տեղահանված անձանց օգնելու իրացնել զբաղվածության հնարավորությունները Հայաստանում:

ՀՏԴ 349.2(042.3)
ԳՄԴ 67.405.1

ISBN 978-9939-1-1983-0
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
www.transparency.am

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4
ՆԱԽԱԲԱՆ 7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 9
1. Զբաղվածության ընդհանուր իրավիճակը 9
2. Պետության կողմից իրականացվող քաղաքականությունը և ծրագրերը 17
2.1. Բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության հատուկ ծրագիրը 17
2.2. Բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագիրը 23
2.3.Զբաղվածության ընդհանուր ծրագրերում բռնի տեղահանված անձանց ներառումը 24
3. Բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ... 26
4. Արցախցիների աշխատանքային իրավունքների և զբաղվածության հարցերով տարբեր դերակատարների ջանքերը և համագործակցությունը 27
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ոչ պետական դերակատարների կողմից իրականացված ծրագրեր 32
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Միջազգային հաջողված փորձի օրինակներ 37
Գրականության ցանկ 42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՏՄ	Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԿՏՀ	կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ՀԱՄԿ	Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիա
ՀԲԸՄ	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կառույց

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հետազոտությունն ուղղված է բռնի տեղահանված արցախցիների զբաղվածության և աշխատանքային իրավունքների իրացման հնարավորությունների, ծագած խոչընդոտների ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով աջակցել պետությանը հնարավորինս հասցեական և արդյունավետ ծրագրեր մշակելու ու իրականացնելու, բռնի տեղահանված անձանց օգնելու իրացնել զբաղվածության հնարավորությունները Հայաստանում:

Հետազոտության խնդիրն է քարտեզագրել զբաղվածության ոլորտում տեղահանված բնակչությանը տրամադրվող աջակցությունն ու հասանելի ծառայություններն ու դրանց արդյունավետությունը, բացահայտել պետության կողմից տրամադրվող աջակցության ծրագրերի իրականացման բացերը և խնդիրները և հանդես գալ առաջարկություններով զբաղվածության ոլորտում պետության կողմից առավել հասցեական և արդյունավետ սոցիալական աջակցության միջոցառումներ իրականացնելու համար:

Որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել 2023 թ. սեպտեմբերի բռնի տեղահանումից և դեպի ՀՀ ներհոսքից մինչև 2024 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածը: Հետազոտության ընթացքում իրականացվել են փաստաթղթերի, մասնավորապես՝ ներպետական օրենսդրության ուսումնասիրություն, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ լիազոր մարմնի ներկայացուցչի և շահառուների՝ բռնի տեղահանված անձանց հետ հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ, ինչպես նաև օգտագործվել են գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացված քանակական հարցումները:

Հետազոտական աշխատանքի արդյունքում վեր են հանվել բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքներն իրացնելու ու զբաղվածության ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ: Դրանք առնչվում են քաղաքացիության վերաբերյալ պահանջի բերումով անհավասար հնարավորությունների ստեղծմանը, ծրագրերում խոցելի խմբերի թիրախային ներգրավման բացերին, աշխատանքի անհամաչափ տարբերակված մոտեցումներին, իրազեկության մակարդակին, վերապատրաստման հնարավորությունների սահմանափակ լինելուն: Խնդիրների պատճառները հաճախ պայմանավորված են ծրագրերի համակարգման ու սինխրոնացման, մոնիտորինգի ու գնահատման բացերով:

Հետազոտության արդյունքում վերհանված վերոնշյալ և այլ խնդիրների հասցեագրման նպատակով մշակվել են մի շարք առաջարկություններ.

Զբաղվածության հատուկ ծրագրեր

1. Պետության կողմից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված զբաղվածության ծրագրի շրջանակում հատուկ քայլեր ձեռնարկել կամ զբաղվածության այլ ծրագրեր մշակել հաշմանդամություն կամ սահմանափակ կարողություններ ունեցող, ինչպես նաև 50+ տարիքի անձանց զբաղվածության հարցը լուծելու համար: Քայլեր ձեռնարկել նաև թոշակառուների շրջանում զբաղվածության հատուկ ծրագրեր մշակելու ուղղությամբ:
2. Ավելացնել տեղահանված անձանց զբաղվածության ապահովման ծրագրով մասնակիցների քանակը, ինչպես նաև երկարաձգել գործատուների համար եկամուտների վերադարձի հնարավորությունը մինչև 18 ամիս:

3. Բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագրով նախատեսված լրացուցիչ հատկացվող լրավճարը տրամադրել նաև մրցութային կարգով աշխատանքի ընդունված ուսուցիչներին:

Մասնագիտական ուսուցում/վերապատրաստման դասընթացներ

4. Մասնագիտական խմբերի՝ օրինակ, հաշվապահների, դատավորի օգնականների և այլ հատուկ մասնագիտությունների համար պետության կողմից կամ պետության կողմից պատվիրակված կազմակերպության և ՊՈԱԿ-ների միջոցով կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, այդ թվում՝ դրամաշնորհների միջոցով ներգրավելով մասնագիտական միավորումներին, արհեստակցական միություններին և այլ առնչվող կազմակերպություններին:

Պետական ծառայության հասանելիությունը բռնի տեղահանված անձանց համար

5. Նախատեսել փոփոխություններ համապատասխան ոլորտային օրենսդրությունում և օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով սահմանել հատուկ հնարավորություն ՀՀ կառավարության որոշմամբ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող բռնի տեղահանված արցախցիների համար զբաղեցնելու հանրային ծառայության պաշտոններ թափուր տեղեր առաջանալու և քննությունները հաղթահարելու դեպքում՝ առաջիկայում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու պայմանով:

Տնտեսական հզորացման ծրագրեր

6. Քարտեզագրել արհեստագործական կրթություն/փորձառություն ունեցող բռնի տեղահանված մասնագետներին ու, ըստ այդմ, վերջիններիս առաջարկել աշխատանք արհեստագործների կարիք ունեցող պետական և ոչ պետական հաստատություններում թե՛ մարզերում, թե՛ մայրաքաղաքում:
7. Մշակել հատուկ ծրագրեր Երևանում և մարզերում տեղահանված անձանց բիզնեսների վերաբացման համար, որը կներառեր թե՛ ՀՀ հարկային դաշտի և բիզնես սկսելու ընթացակարգերին ուսուցողական նպատակով ծանոթացում, թե՛ նախնական կապիտալ. դրամաշնորհների և սուբսիդիաների տրամադրում գործիքների և սարքավորումների ձեռք բերման կամ տարածքի վարձակալության նպատակով:

Մարզային զբաղվածություն

8. Զբաղվածության ապահովման ծրագրում նախատեսել գյուղատնտեսական գործունեության խթանման բաղադրիչ՝ նախատեսելով համապատասխան լիզինգային ծրագրեր:
9. Զբաղվածության նոր ռազմավարության ներքո դիտարկել մարզային/համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հնարավորությունը՝ ուղղված մարզերում հաստատված բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովմանը: Որպես տարբերակ, կարող է նախատեսվել հողամասը վարձակալությամբ բռնի տեղահանված անձանց տրամադրելու դեպքում

վարձակալության հարկի վերադարձի արտոնություն տրամադրելը հողամասի սեփականատիրոջը:

Իրազեկվածություն

10. Իրականացնել իրազեկման արշավներ, այդ թվում՝ արցախի բարբառով՝ արցախցիներին ծանոթացնելու զբաղվածության և վերապատրաստման ծրագրերին:
11. Բարձրացնել աշխատանքային իրավունքների և ԱԱՏՄ վերաբերյալ իրազեկվածությունը հատուկ տեղեկատվական թերթիկների կամ հեռուստատեսությամբ ու սոցիալական ցանցերում կարճ տեսանյութերի տարածման միջոցով:

Զբաղվածության ծրագրերի/նախաձեռնությունների համակարգում

12. Փոխկապակցել/սինխրոնացնել պետական աջակցության, այդ թվում՝ զբաղվածության ու բնակարանային ապահովման ծրագրերը, որպեսզի հնարավոր լինի տրամադրել համակարգված նպատակային աջակցություն՝ բռնի տեղահանվածների կարիքների հիման վրա:
13. Մշակել և ներդնել հատուկ ծրագրերի միջանկյալ մոնիտորինգի ավելի արդյունավետ մեխանիզմներ և մեթոդաբանություն, այդ թվում՝ վիճակագրության վարում, որը հնարավորություն կտա ժամանակին բացահայտել ծրագրի կարիքներն ու թերությունները՝ ի լրումն վերջնական գնահատման իրականացմանը, որը նախատեսվում է տարեվերջին:
14. Դիտարկել բողոքների ներկայացման ու հաշվառման հատուկ համակարգի ստեղծումը, ինչպես նաև ծրագրի օնլայն՝ իրական ժամանակով մոնիտորինգ իրականացնելու հնարավորությունը, որտեղ մասնակիցների թվին, ոլորտային ներգրավվածությանը, բողոքների քանակին ու բնույթին իրական ժամանակով հետևելու համակարգը հնարավորություն կտա ժամանակին բացահայտել ծրագրի կարիքներն ու թերությունները:
15. Բռնի տեղահանված անձանց զբաղվածության հարցի լուծման գործում ապահովել արդյունավետ համագործակցություն հասարակական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես կարիքների վերհանման և տեղեկատվության փոխանակման առումով:

ՆԱԽԱԲԱՆ

2023 թվականի սեպտեմբերի վերջին Արցախի (նաև՝ Լեռնային Ղարաբաղ) նկատմամբ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդյունքում 100,000 արցախցիներ, թողնելով իրենց ունեցվածքը, տեղահանվեցին և ներգաղթեցին Հայաստան: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությունը նախաձեռնեց մի շարք պետական ծրագրեր՝ աջակցելու բռնի տեղահանված անձանց, թեթևացնելու նրանց սոցիալական վիճակը և ստեղծելու բավարար պայմաններ Հայաստանում մնալու և աշխատելու համար:

Հայաստան տեղափոխվելուց մեկ տարի անց արցախցիների զգալի մասը դեռևս կանգնած է զբաղվածության հարցի լուծման լուրջ խոչընդոտների առաջ, որոնք պայմանավորված են ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական-տնտեսական գործոններով: Մինչդեռ աշխատանքային իրավունքի իրացման ու պաշտպանության հարցերը չափազանց կարևոր են, քանի որ ուղղակիորեն առնչվում են մարդկանց արժանապատվությանը, սոցիալական ներառմանը և ապահովությանը:

Սույն հետազոտությունը նպատակ ունի վերլուծել Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների սոցիալական իրավիճակը, զբաղվածության խնդիրները և աշխատանքային իրավունքների պաշտպանությունը:

Հետազոտության արդյունքում ներկայացվում են առաջարկներ, որոնք միտված են օժանդակելու ՀՀ կառավարությանը՝ հասցեագրելու բռնի տեղահանված արցախցիների զբաղվածությանն առնչվող խնդիրները և մշակելու հատուկ ծրագրեր, որոնք ուղղված են բռնի տեղահանված անձանց իրավիճակի բարելավմանն ու տնտեսական հզորացմանը: Ուսումնասիրության արդյունքները կարող են նաև օգնել հասարակական կազմակերպություններին ծրագրերի մշակման համար՝ ուղղված աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանը:

Հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) արցախյան գործընկերոջ՝ «Քաղաքացիական հաբ» ՀԿ-ի ներգրավմամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) 2023 թ. նոյեմբերից ի վեր հետամուտ է ՀՀ իրավասու կառույցների կողմից արցախցիների կարիքները հոգալուն ուղղված քաղաքականության իրականացմանը: Կազմակերպությունն իրականացրել է մի քանի միջոցառում ու հետազոտություն պետական աջակցության տրամադրման ընթացքում ծագած խնդիրները վեր հանելու և լուծումներ առաջարկելու նպատակով:

Սույն հետազոտությունն ուղղված է բռնի տեղահանված արցախցիների զբաղվածության և աշխատանքային իրավունքների իրացման հնարավորությունների, ծագած խոչընդոտների ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով աջակցել պետությանը հնարավորինս հասցեական և արդյունավետ ծրագրեր մշակելու ու իրականացնելու, բռնի տեղահանված անձանց օգնելու իրացնել զբաղվածության հնարավորությունները Հայաստանում:

Հետազոտության խնդիրն է քարտեզագրել զբաղվածության ոլորտում տեղահանված բնակչությանը տրամադրվող աջակցությունը, հասանելի ծառայություններն ու դրանց

արդյունավետությունը, վեր հանել պետության կողմից տրամադրվող աջակցության ծրագրերի իրականացման բացերն ուխնդիրները և հանդես գալ առաջարկություններով զբաղվածության ոլորտում պետության կողմից առավել հասցեական և արդյունավետ սոցիալական աջակցության միջոցառումներ իրականացնելու համար:

Հետազոտության համար դիտարկվող ժամանակահատված է ընտրվել 2023 թվականի սեպտեմբերի վերջին բռնիտեղահանումից և դեպի ՀՀ ներհոսքից մինչև 2024 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության իրականացման ընթացքում օգտագործվել են տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները՝

- **փաստաթղթերի ուսումնասիրություն,** մասնավորապես ՀՀ կառավարության որոշումները, որոնք նախատեսում են բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության ապահովման ուղղությամբ աջակցության ծրագրեր, ինչպես նաև միջազգային ու տեղական կառույցների թեմատիկ հետազոտություններ,
- **հարցումներ**, որոնք ուղղվել են տարբեր պետական գերատեսչություններին, ներառյալ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՍՀՆ), ՀՀ աշխատանքի և առողջապահության տեսչական մարմնին (ԱԱՏՄ), ՀՀ այլ նախարարություններին, ինչպես նաև արցախցիների զբաղվածության հարցով ներգրավված հասարակական, միջազգային և մասնավոր կազմակերպություններին 2024 թ. փետրվար-մարտ ամիսներին,
- **ֆոկուս խմբային քննարկումներ** շահառուների հետ, որոնք կազմակերպվել են 2023 թ. նոյեմբերին՝ ներառելովԵրևանում և 5 մարզերում (Արմավիր, Արարատ, Կոտայք, Լոռու, Սյունիք) բնակվող 100 արցախցիների (13 քննարկում),
- **հարցազրույցներ շահագրգիռ կողմերի հետ,** որոնք անցկացվել են Երևանում ու վերը նշված 5 մարզերում 120 բռնի տեղահանված անձանց հետ 2023 թ. նոյեմբեր ամսին, ինչպես նաև ԱՍՀՆ ներկայացուցիչների հետ՝ 2024 թ. հունիս ամսին,
- **համացանցում պաշտոնական տեղեկատվության ուսումնասիրություն,** որը ներառել է ՀՀ կառավարության, ԱՍՀՆ և ՄՍԾ ինտերնետային կայքերի և սոցիալական ցանցերի օգտահաշիվների ուսումնասիրություն,
- **միջազգային փորձի ուսումնասիրություն,** որտեղ վերլուծվել են Նիդերլանդների և Գերմանիայի նմանօրինակ աջակցությունը փախստականների զբաղվածության հատուկ ծրագրերի մշակման գործում:

Վերլուծության համար օգտագործվել են ծրագրի գործընկեր APR Group-ի կողմից 2024 թ. փետրվար-մարտ և մայիս ամիսներին 1,200 բռնի տեղահանված արցախցիների շրջանում աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի և զբաղվածության վերաբերյալ իրականացված 2 քանակական հարցումների տվյալները:[1]

[1] APR Group, Հայաստանում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքներ, 2024 թ., https://aprgroup.org/images/Library/Artsakh_Q.pdf, (դիտված՝ 01.09.2024 թ.):

Հետազոտական աշխատանքի ավարտին իրականացվել է տվյալների ճշգրտման ու հաստատման (verification) հանդիպում տեղահանված արցախցիների շահերը ներկայացնող և վերջիններիս զբաղվածության հարցով զբաղվող տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի արդյունքում վերջնական տեսքի են բերվել հետազոտության արդյունքում մշակված առաջարկները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Զբաղվածության ընդհանուր իրավիճակը

Ըստ 2023 թ. նոյեմբերին իրականացված ելակետային ֆոկուս խմբային քննարկումների և խորին հարցազրույցների արդյունքների՝ արցախցիների մեծամասնության համար օրհասական էր աշխատանքի տեղավորման հարցը, քանի որ մտահոգված են՝ առանց աշխատանքի չեն կարողանա հոգալ կեցության և առօրյա ծախսերը: Աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտներն են մասնագիտական աշխատատեղերի պակասը և աշխատավարձերի ցածր լինելը: Տվյալ պահի քննարկումների արդյունքները ցույց են տվել, որ շատ ավելի մեծ է այն մարդկանց ու նրանց ընտանիքի անդամների քանակը, որոնք աշխատանք են փնտրում:

Մասնավորապես ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների շրջանում արձանագրվել էին զբաղվածության ապահովման հետևյալ փորձերը.

- Մեծամասնությունը ընդունվել էր աշխատանքի սպասարկման ոլորտում (վաճառք, գեղեցկության սրահներ) օրվա հացը վաստակելու համար, թեկուզ Արցախում աշխատում էին՝ ըստ մասնագիտության, օրինակ՝ ուսուցիչ, իրավաբան, հաշվապահ և այլն:
- Տղամարդկանց մեծամասնությունը, որոնք ունեն ավտոմեքենա, տաքսի ծառայություն են մատուցում մինչև հիմնական աշխատանք գտնելը:
- Կային անձինք, որ աշխատանքի ընդունվելու համար դիմել են այն բանկերին, որոնք ունեն հատուկ վերապատրաստման ու աշխատանքի տեղավորման ծրագրեր:
- Արցախում հայաստանյան ընկերությունների համար աշխատած անձինք կարողացել են շարունակել աշխատանքը համապատասխան կազմակերպություններում (օրինակ՝ «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որոշ բանկեր):
- Տեղահանված անձանց համար կազմակերպված մասնավոր աշխատանքի տոնավաճառների միջոցով մի քանի հոգի աշխատանք էին գտել՝ գործատու ընկերությունում նախապես անցնելով համապատասխան վերապատրաստում, որի ընթացքում հաճախ վարձատրվել են գործատուի նախաձեռնությամբ:
- Օգտվել են մասնավոր ոլորտում ՏՏ կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումների հնարավորություններից՝ ակնկալիքով, որ դասընթացները հաջողությամբ անցնելուց հետո կընդունվեն աշխատանքի: Դասընթացները բնականաբար սահմանափակ էին, իսկ անվճար տեղերն արագ սպառվել են:
- Կանանցից շատերը, անկախ մասնագիտական կրթությունից (օրինակ՝ նախկին ուսուցիչ, պետական ծառայող), ներկայումս վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման մասնավոր դասընթացներ են անցնում, քանի որ այս ոլորտում ավելի մեծ է աշխատանք գտնելու և համեմատաբար բարձր եկամուտ ունենալու

հնարավորությունը: Դասընթացներին մասնակցում են ինչպես անվճար՝ բարեգործական կազմակերպությունների նախաձեռնությամբ, այնպես էլ՝ սեփական միջոցների հաշվին:

- Պետական համակարգում, բացի առողջապահական համակարգի վերապատրաստումներից, նշվել է նաև նոտարի օգնականների անվճար դասընթացների մասին, որոնց 200-ից ավելի հարցված մասնակիցներից մեկն էր հաճախում, սակայն կազմակերպիչները շեշտել են, որ դասընթացներն անցնելուց հետո էլ նրանց աշխատանքով չեն ապահովելու:
- Հատկապես հաճախ է շեշտադրվել աշխատավարձի ցածր լինելու խնդիրը՝ թե՛ Արցախի աշխատաշուկայի հետ համեմատած, թե՛ հաշվի առնելով ներկա իրավիճակում բազմաթիվ խնդիրներն ու ծախսերը. *«Հարցը այն է, որ այստեղ ծախսերը շատ են, էլի կհամաձայնվեինք ցածր աշխատավարձի, բայց պետք է վարձ վճարենք, կոմունալ, ոչինչ չունենք այստեղ, ցածր աշխատավարձով հնարավոր չէ»*:
- Մասնակիցների մի մասը ցանկություն է հայտնել վերապատրաստվելու նոր մասնագիտություններ ձեռք բերելու համար: Սակայն մեծամասնությունը պետության կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացների մասին տեղյակ չէր:
- Տեղահանված անձինք փորձում են Արցախում ունեցած փորձի հիման վրա սեփական բիզնես սկսել, օրինակ՝ միրգ-բանջարեղենի խանութ, սննդի կետ, հրուշակեղենի պատրաստում և օնլայն վաճառք, կարուձև: Այնուամենայնիվ, շատ հաճախ տեղահանվածները չունեն բավարար անձնական կապիտալ բիզնես սկսելու համար: Այսպես, օրինակ, Արցախում հրուշակեղենի փոքրիկ արտադրամաս ունեցող մի ընտանիք չի կարողանում վերաբացել բիզնեսը, քանի որ շատ թանկ վարձավճարներ են և անհարմար պայմաններ: Մի քանի մասնավոր ընկերությունների դիմել են տեխնիկայի աջակցության համար, դեռ պատասխան չեն ստացել:
- Հատուկ ոլորտային և մասնագիտական խմբերի ներկայացուցիչները (արհեստավորներ, հաշվապահներ, մանկավարժներ) բախվում են նոր աշխատաշուկայի ադապտացման խնդիրներին, ներառյալ՝ գործիքների պակասի, օրենսդրական և մեթոդաբանական տարբերությունների և այլն:
- Աշխատանք գտնելու հնարավորությունները հատկապես քիչ են մարզերում, ուստի մարզաբնակ արցախցիները նաև քննարկում են Երևան տեղափոխվելու հնարավորությունը, որը սակայն լրացուցիչ ծախսերի հետ է կապված բնակարանների բարձր վարձավճարների պատճառով:
- Բազմաթիվ արցախցիներ գրանցվել են Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) տարածքային կենտրոններում, սակայն շատերը դեռևս տվյալ պահի դրությամբ առաջարկ չէին ստացել: Նրանք, ովքեր ուսումնասիրել են առկա աշխատատեղերը կամ ստացել են աշխատանքի առաջարկներ, նշում են, որ դրանք հիմնականում ոչ մասնագիտական, որակավորում չպահանջող աշխատատեղեր են և չեն համապատասխանում իրենց որակավորմանը և ակնկալիքներին: Ըստ էության, ՄՍԾ-ն պարզապես առաջարկություններ է տրամադրել գնալու ու տեղում գործատուի հետ բանակցություններ վարելու համար, որոնք ոչ միշտ են հաջողությամբ պսակվել: Մի քանի մասնակից, այնուամենայնիվ, աշխատանք է գտել ՄՍԾ միջոցով՝ որպես պահակ, բանվոր, տրակտորիստ, վարորդ:

Զբաղվածության իրավիճակն ու վերհանված խնդիրները՝ ըստ որոշ մասնագիտական խմբերի.

- **Ուժային կառույցներ.** Արցախի պայմանագրային զինծառայողներից և նրանց ընտանիքի անդամներից շատերը նշում են, որ չեն ցանկանում այլևս ծառայել՝ նշելով ՀՀ-ում զինվորական ծառայության ցածր աշխատավարձը, ՀՀ քաղաքացիություն ստանալու պարտադրանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ արցախցիներին ծառայության համար հիմնականում ուղարկում են սահմանամերձ տարածքներ, «*Չգիտես ինչու, այստեղ մտածում են, որ արցախցին միշտ պետք է սահմանամերձ գոտում ապրի, եթե աշխատանք է փնտրում, սահման են ուղարկում՝ պատճառաբանելով, որ փորձառու են*»: Իսկ հարցմանը մասնակցած նախկին ոստիկանները, որոնք ցանկանում են շարունակել ծառայությունը Հայաստանում, չեն կարողացել աշխատանքի ընդունվել, նրանցից եզակիները մասնավոր հատվածում կարողանում են աշխատանք գտնել՝ որպես անվտանգության աշխատակից:
- **Ուսուցիչներ.** թեև կառավարությունը հայտարարել էր, որ ուսուցիչների համար աշխատատեղեր կլինեն, բազմաթիվ ուսուցիչներ ԿԳՄՍՆ հայտերը լրացնելուց հետո դեռևս սպասում են հետադարձ կապի: Բացի այդ՝ առանձին մասնակիցներ նշել են աշխատանքի ընդունվելու մրցույթին մասնակցելու պահանջի մասին, ընդ որում՝ ոչ միայն հանրակրթության, այլև նախադպրոցական կրթության ոլորտում: Դեպքեր կան, որ դպրոցում աշխատանք են առաջարկել, սակայն ժամերի պակասի պատճառով աշխատավարձը չափազանց ցածր է կամ աշխատանքը հեռու գյուղական համայնքում է, ուր հասնելու համար ավելանում է ճանապարհածախսը. «*Ես 35 տարվա փորձով պատմության ուսուցիչ եմ, […] առաջարկել են Սարահարթում ուսուցիչ, սակայն 8 դասաժամ էր, որը կկազմի մոտ 40 հազար աշխատավարձ, ես էլ ամեն օր պետք ա հանրային տրանսպորտի փող ծախսեմ էդ հեռու տեղը գամ գնամ*»: Մի դեպքում ուսուցիչը ընդունվել էր աշխատանքի դպրոցում և գոհ էր ցուցաբերված վերաբերմունքից: Մեկ այլ դեպքում աշխատավարձի քիչ լինելու պատճառով մասնակիցը նախընտրել էր մասնավոր ընկերությունում աշխատել:
- **Բուժաշխատողներ.** յս խմբի ներկայացուցիչները ևս աշխատանքի տեղավորման դժվարություններ են ունենում, քանի որ աշխատանքի համար դիմելով տարբեր հիվանդանոցներ՝ արձագանք են ստանում, որ թափուր աշխատատեղ չկա: Մի քանիսն էլ մերժել են աշխատանքի առաջարկը աշխատավարձի ցածր լինելու պատճառով: Կան նաև դրական օրինակներ. մի բուժքույր փորձաշրջանից հետո ընդունվել է հիվանդանոց: Նա նշել է, որ այստեղ բուժքրոջ աշխատանքն ավելի թեթև է, սակայն աշխատավարձն էլ ավելի ցածր է, և պետական աջակցության ծրագրերի դադարեցումից հետո չի կարողանալու հոգալ ընտանիքի ծախսերը: Մասնակիցներից մի քանիսը դիմել են ՀՀ առողջապահության նախարարություն և Առողջապահության ազգային ինստիտուտ վերապատրաստման համար. շատ հաճախ ստացել են դրական արձագանք: Ըստ Առողջապահության նախարարության տեղեկատվության՝ նախարարության ուղղորդմամբ մարզային բժշկական կազմակերպություններում աշխատանքի անցնելու պարագայում Արցախից տեղահանված բուժաշխատողներին տրամադրվում է ամսական գումար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի[2] հոդված 1-ով սահմանված աշխատավարձի եռապատիկի չափով՝ մինչև 6 ամիս ժամկետով: 2024 թ. մարտի 5-ի դրությամբ 34 բուժաշխատող նախարարության ուղղորդմամբ անցել է աշխատանքի մարզային բժշկական հաստատություններում և օգտվում է վերոնշյալ աջակցությունից: Նախարարության տրամադրած տվյալներով ՀՀ տարբեր բժշկական հաստատություններում աշխատանքի է անցել Լեռնային

[2] ՀՀ օրենքը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», ընդունված՝ 2003 թվականի դեկտեմբերի 17-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172160, (դիտված՝ 05.03.2024 թ.):

Ղարաբաղից տեղահանված 217 անձ: 2023 թ. ընթացքում տեղահանված 209 ավագ և 516 միջին բուժաշխատողի տրամադրվել է պետական պատվերի շրջանակներում շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտավորման միջոցառումների մասնակցության միջնորդագրեր: Նախատեսվում է գործընթացը շարունակել նաև 2024 թ. ընթացքում:

- **Արհեստավորներ.** արհեստներին տիրապետող և Արցախում արհեստով վաստակող մարդկանցից շատերը այստեղ չեն կարողանում շարունակել աշխատանքը, քանի որ գործիքները թողել են Արցախում, օրինակ՝ դերձակները, փայտագործները, վարսահարդարները:
- **Հաշվապահներ.** հաշվապահությամբ մասնագիտացած անձինք նշում են, որ վերապատրաստման կարիք ունեն**,** քանի որ հաշվապահական համակարգը այստեղ տարբերվում է, ուստի առանց վերապատրաստման կդժվարանան աշխատանք գտնել:
- **Պետական ծառայողներ.** Հետազոտության մասնակից միակ պետական ծառայողը, որը կարողացել էր աշխատանքի ընդունվել մինչև քաղաքացիության պահանջի մասին հայտարարելը, դատական համակարգի աշխատող էր, սակայն որոշումից հետո պայման է դրվել, որ 3 ամսվա ընթացքում քաղաքացիություն ստանա:

Պետական ծառայության խնդիրն առանձնահատուկ է, քանի որ բռնի տեղահանված անձանց մեծամասնությունը Արցախում աշխատում էր պետական համակարգում և հիմնականում հանրային ծառայող էր: Ներկայումս, կապված ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստանալու ու ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու նոր պահանջի հետ, արցախցիները չեն կարող անմիջապես շարունակել իրենց աշխատանքը ՀՀ պետական մարմիններում՝ բացառությամբ ՏԻՄ-երի:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի[3]՝ *հանրային ծառայության պաշտոն կբաղեցնելու իրավունք ունեն հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով) ներկայացվող պահանջները բավարարող և պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ համայնքային ծառայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:* «Քաղաքացիական ծառայության մասին»[4] ՀՀ օրենքի 8-րդ 2-րդ մասի համաձայն՝ *քաղաքացիական ծառայության պաշտոն կբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:*

Նշված կարգավորումներով սահմանված պահանջների հիման վրա՝ բռնի տեղահանված արցախցիները զրկված են պետական համակարգում աշխատանքի անցնելու հնարավորությունից մինչև ՀՀ քաղաքացիության համար դիմելը և քաղաքացիություն

[3] ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977, (դիտված՝ 15.06.2024 թ.):
[4] ՀՀ օրենքը «Քաղաքացիական ծառայության մասին», ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին, . https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193796, (դիտված՝ 15.06.2024 թ.):

ստանալը, որը թեև առավել պարզեցված կարգով է տրամադրվում արցախցիներին, սակայն կարող է տևել 1-2 ամիս:[5]

ՀՀ նախարարություններին ուղարկված ԹԻՀԿ հարցումների պատասխանները 2024 թ. մարտի կեսի դրությամբ ցույց են տվել հետևյալ պատկերը.

- ՀՀ առողջապահության նախարարությունում քաղաքացիական ծառայության է անցել 2 բռնի տեղանված արցախցի, որոնք բավարարել են քաղաքացիական ծառայության համար սահմանված պայմանները:
- ՀՀ արդարադատության նախարարություն է դիմել բռնի տեղահանված 12 քաղաքացի, սակայն ՀՀ քաղաքացիություն չունենալու պատճառով նրանց՝ նախարարությունում աշխատանքի անցնելու դիմումը մերժվել է: Միևնույն ժամանակ, Արդարադատության նախարարության համակարգում գործող կազմակերպություններում 2023 թվականի սեպտեմբերի 28-ից ի վեր ընդունվել է աշխատանքի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընդհանուր թվով 17 հոգի, մասնավորապես՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում՝ 7 հոգի, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 4 հոգի, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ում՝ 4 հոգի, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 2 հոգի:
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունում թե՛ դիվանագիտական ծառայության, թե՛ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար նույնպես անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիությունը, որի մասին տեղեկացվել են նաև Արցախի արտաքին գործերի նախարարության նախկին աշխատողները: Նրանցից 2-ը պահանջը բավարարելուց հետո 2024 թ. փետրվարին մասնակցել է դիվանագիտական ծառայության անցնելու համար կազմակերպած ընդհանուր մրցույթին:
- ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարությունում աշխատանքի անցնելու համար դիմել է 1 բռնի տեղահանված անձ, որի դիմումը քաղաքացիություն չունենալու պատճառով մերժվել է:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում աշխատանքի է ընդունվել միայն մեկ տեղահանված անձի, որն ունեցել է ՀՀ քաղաքացիություն:
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նաև ԿԳՄՍՆ) նշել է, որ նախարարության համակարգում բռնի տեղահանված աշխատող չունեն՝ ՀՀ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի չափանիշներին համապատասխան:
- ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ոստիկանությունում ծառայության անցնելու համար բռնի տեղահանված անձանցից ստացվել է 54 դիմում: Արցախի ոստիկանության նախկին 5 ծառայող նշանակվել է գլխավոր, 2-ը՝ միջին խմբի պաշտոնների, իսկ 4 նախկին ծառայողների վերաբերյալ ներկայումս պատրաստվում են նյութեր: Ընդհանուր առմամբ, 2023 թ. սեպտեմբերի 28-ից մինչև 2024 թ. մարտ ամիս բռնի տեղահանված և ՀՀ ներքին գործերի նախարարությունում ծառայության անցնելու խնդրանքով դիմած ավելի քան 40 անձանց դիմում հնարավոր չի եղել բավարարել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի[6] 11-րդ հոդվածի 1-ին մասի

[5] Հետք, Կառավարությունը ներկայացրել է Արցախից բռնի տեղահանվածների համար ՀՀ քաղաքացիություն ստանալու կարգը, 27 մայիսի 2024 թ., https://hetq.am/hy/article/166899, (դիտված՝ 18.10.2024 թ.):
[6] ՀՀ օրենքը «Ոստիկանությունում ծառայության մասին», ընդունված՝ 2002 թվականի հուլիսի 3-ին, . https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190384, (դիտված՝ 02.06.2024 թ.):

պահանջների համաձայն՝ ոստիկանությունում ծառայության կարող են անցնել, իսկ ըստ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն միայն ՀՀ քաղաքացիները: Վերջիններս գրավոր տեղեկացվել են, որ հարցը կարող է քննարկվել նրանց ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելուց հետո:

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում աշխատանքի անցնելու համար դիմել է 8 բռնի տեղահանված արցախցի: Ըստ նախարարության՝ բոլոր 8-ի դիմումը մերժվել է, քանի որ ՀՀ կառավարության հոկտեմբերի 26-ի N 1864 որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձինք «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 62-ի 1-ին մասի ուժով ճանաչվել են փախստական, իսկ ՀՀ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը որպես քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու պահանջ է դնում ՀՀ քաղաքացիություն ունենալը:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ մինչև 2024 թ. մարտ ամիս ստացել է քաղաքացիական ծառայության անցնելու 2 դիմում, սակայն հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» և «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքները՝ պետական (զինվորական) ծառայության մեջ կարող են գտնվել ՀՀ քաղաքացիները, իսկ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացիություն ունենալու պարտադիր նախապայմանը սահմանված է համապատասխան օրենքով: Միևնույն ժամանակ նշել է, որ 2023 թ. սեպտեմբերի 28-ից հետո պաշտպանության բանակում նախկին ծառայություն անցնող պայմանագրային զինծառայողներից ներկայումս ՀՀ զինված ուժերում ծառայությունը շարունակում է սպայական կազմի շուրջ 33 տոկոսը, ավագ ենթասպայական կազմի շուրջ 22 տոկոսը, կրտսեր ենթասպայական կազմի շուրջ 9 տոկոսը և շարքային պայմանագրային կազմի շուրջ 9 տոկոսը, իսկ քաղաքացիական ծառայության պաշտոնների նշանակվող անձանց հաշվառումն՝ ըստ նախկին բնակության վայրի, չի իրականացվում:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում աշխատանքի անցնելու համար դիմել է 6 բռնի տեղահանված անձ, որից 3-ի դիմումը մերժվել է ՀՀ քաղաքացիության պահանջը չբավարարելու հիմքով, իսկ 3-ը չեն ներկայացել սահմանված օրը մրցույթին մասնակցելու համար:
- ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 28-ից ի վեր ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված հայտարարության հիման վրա աշխատանքի ընդունվելու նպատակով դիմել է 97 բռնի տեղահանված անձ: Դիմած արցախցիներից 3-ը առանց նախապայմանների ընդունվել են աշխատանքի՝ որպես քաղաքացիական աշխատանք կատարողներ (իրավախորհրդատու, տնտեսագետ, առանձին գործառույթներ համակարգող խորհրդական):

Ընդհանուր առմամբ, ըստ նախարարությունների կողմից ներկայացված պատասխանների, հանրային ծառայության անցնելու համար ներկայացվել է 185 դիմում, որից 164-ը մերժվել է, և աշխատանքի է ընդունվել ընդամենը 17 բռնի տեղահանված, որոնք, ըստ էության, արդեն իսկ ձեռք էին բերել ՀՀ քաղաքացիություն:

	Նախարարության անվանումը	**Դիմորդների քանակը**	**Ընդունվել է աշխատանքի**
1.	Առողջապահության նախարարություն	2	2

2.	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն[7]	-	-
3.	Արդարադատության նախարարություն	12	0
4.	Արտաքին գործերի նախարարություն	2	2
5.	Բարձր տեխնոլոգիաների նախարարություն	1	0
6.	Էկոնոմիկայի նախարարություն	1	1
7.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	0
8.	Ներքին գործերի նախարարություն	54	7
9.	Շրջակա միջավայրի նախարարություն	8	0
10.	Պաշտպանության նախարարություն	2	2
11.	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	6	0
12.	Ֆինանսների նախարարություն	97	3
Ընդամենը		**185**	**17**

APR Group-ի Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ 2024 թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացված հարցման արդյունքներով հարցվածների ավելի քան 90 տոկոսը գտնում էր, որ Արցախից եկած անձանց համար Հայաստանում աշխատանք գտնելը դժվար է, և իրենց շրջապատում քչերն են գործ գտել: Հետազոտության մասնակիցների մեծամասնությունը աշխատում էր պետական մարմիններում, մինչդեռ բռնի տեղահանվելուց և ՀՀ-ում հաստատվելուց հետո դժվարանում է աշխատանք գտնել պետական մարմիններում: Հարցմանը մասնակցած 611 արցախցիների 56.5 տոկոսը, դեռևս չէր կարողացել որևէ տեսակի աշխատանք գտնել, այդ թվում՝ ժամանակավոր բնույթի: Մշտական աշխատանք էին գտել արցախցի աշխատունակների ընդամենը 23 տոկոսը: Ընդ որում, հարցվածների մեծամասնությունը ապրում էր Երևան քաղաքում, որտեղ աշխատաշուկայի առաջարկն ու աշխատատեղերի քանակը ավելի շատ է, քան մարզային բնակավայրերում: Աշխատողների մեծամասնությունը աշխատանք էր գտել մեծածախ և մանրածախ առևտրի և շինարարության ոլորտներում: Ուշագրավ է, որ հարցվածների 85 տոկոսը պետության կողմից իրականացվող զբաղվածության հետ կապված ծրագրերից ու ծառայություններից առհասարակ չի օգտվել: Մեծամասնությունն աշխատանք գտել է ծանոթի կամ բարեկամի և ոչ թե պետական ծրագրերի միջոցով: Աշխատող մասնակիցների 70 տոկոսի աշխատավարձը ավելի ցածր է Արցախում իրենց ունեցած աշխատավարձերից:[8]

Կարևոր է, որ մասնակիցների մեծամասնությունը աշխատատեղում որևէ տեսակի խտրական վերաբերմունքի չի ենթարկվել: Որպես համընդհանուր խնդիր՝ դեպքերի

[7] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում բռնի տեղահանված անձանց աշխատանքի անցնելու վերաբերյալ տեղեկատվություն չի հայցվել:

[8] APR Group, Հայաստանում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքներ, 2024թ., https://aprgroup.org/images/Library/Artsakh_Q.pdf, (դիտված՝ 01.09.2024 թ.):

մեծամասնությունում աշխատավայրը հարմարեցված չի եղել տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար, թեքահարթակները նույնպես բացակայել են:

2024 թ. մայիս ամսին իրականացված հարցման ժամանակ, որն անցկացվել է 550 բռնի տեղահանված արցախցիների շրջանում, ՀՀ-ում երբևէ չաշխատածների քանակը հարցվածների շրջանում ավելացել է 1,2 տոկոսով՝ կազմելով 57.7 տոկոս՝ նախկին 56.5 տոկոսի համեմատ: Բոլոր մնացած ցուցանիշներով գրեթե ոչինչ էականորեն չէր փոխվել: Հիմնական խնդիրը շարունակում էր մնալ աշխատանքի բացակայությունը կամ ցածր վարձատրվող աշխատանքը, որը դեպքերի մեծամասնությունում հեռու էր գտնվում բնակության վայրից: Արցախցիները հիմնականում աշխատանքի են ընդունվել շինարարության և մեծածախ/մանրածախ առևտրի ոլորտներում և ոչ թե պետական ծրագրերի միջոցով, այլ ծանոթների կամ բարեկամների օգնությամբ:[9] Ընդհանուր առմամբ, թեև Հայաստան մուտք գործելուց հետո անցել էր 6 ամիս, սակայն բռնի տեղահանված անձանց զբաղվածության վիճակը էականորեն չէր բարելավվել:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2024 թ. ապրիլ ամսվա դրությամբ աշխատանքի էր ընդունվել Արցախից բռնի տեղահանված ընդամենը 16,300 անձ և 1,065 անձ էլ ուներ գործող ձեռնարկատիրություն կամ գրանցված էր որպես ընկերության հիմնադիր/մասնակից:[10] 2024 թ. հուլիս ամսվա տվյալներով՝ աշխատանքի ընդունված բռնի տեղահանված անձանց թիվը կազմում է շուրջ 20,000:[11]

Հետազոտությունը ցույց է տվել, որ քաղաքացիության գործոնը և ՀՀ կառավարության N 1864 որոշումը[12] արցախցիներին փախստական ճանաչելու վերաբերյալ, բացասաբար է ազդել զբաղվածության հարցի լուծման առումով: Արցախցիները կանգնել են ընտրության առջև՝ հրաժարվել նախկին անձնագրից, որը ֆորմալ առումով և նրանց ընկալմամբ ՀՀ քաղաքացու անձնագիր էր, թե հարկադրված ընդունել ՀՀ քաղաքացիություն՝ սպասելով մի քանի ամիս՝ մինչև կշնորհվի ՀՀ քաղաքացու անձնագիր:

Այս տեսանկյունից դրական զարգացում է 2024 թ. հուլիսին ԱԺ կողմից ընդունված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որի հիման վրա Արցախում ազգային անվտանգության համակարգի նախկին աշխատակիցները կարող են ընդունվել աշխատանքի ՀՀ համանուն կառույցում,[13] թեև հետազոտությունը ցույց է տվել, որ աշխատանքի վերցնելիս որպես պայման է դրվում արցախցիների ՀՀ քաղաքացիություն ստանալը ամենաուշը մինչև տարեվերջ: Այնուամենայնիվ, այս օրենսդրական դրույթը

[9] Նույն տեղում:
[10] ՀՀ վարչապետի աշխատակազմ, Վարչապետին է ներկայացվել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի 2023 թ. գործունեության հաշվետվությունը, https://www.primeminister.am/hy/press-release/item/2024/06/20/Nikol-Pashinyan-meeting, (դիտված՝ 25.06.2024 թ.):
[11] Փոխնախարար. շուրջ 20 հազար արցախցի աշխատանքի է տեղավորվել, մի քանի հարյուր մարդ դիմել է բնակարաններով ապահովման ծրագրին մասնակցելու համար, 10.07.2024 թ., https://finport.am/full_news.php?id=50738&lang=1, (դիտված՝ 10.10.2024 թ.):
[12] ՀՀ կառավարության 26 հոկտեմբերի 2023 թվականի N 1864-Ն որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին», https://www.arlis.am/documentView.aspx?docid=184503, (դիտված՝ 12.02.2024 թ.):
[13] ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, ընդունված՝ 2024 թվականի հուլիսի 12-ին , https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195397, (դիտված՝ 19.09.2024 թ.):

վերաբերելի է միայն Ազգային անվտանգության ծառայությանը, իսկ Արցախի հանրային ծառայության մյուս բնագավառների համար նման հնարավորություն նախատեսված չէ:

2. Պետության կողմից իրականացվող քաղաքականությունը և ծրագրերը

Տեղահանումից անմիջապես հետո ԱՍՀՆ կողմից ձևավորվել ու համակարգվել են արագ արձագանքման հատուկ թեմատիկ աշխատանքային խմբեր, որոնցում ընդգրկվել են պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Թեմատիկ խմբերից մեկը, օրինակ, վերաբերում էր զբաղվածությանն ու տնտեսական անվտանգությանը, որում ընդգրկվել էր շուրջ 30 միջազգային կազմակերպությունների, ԱՍՀՆ, ինչպես նաև ՀՀ և Արցախի էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ: Խումբը սկզբնական շրջանում հանդիպում էր ամիսը 2 անգամ՝ համակարգելու բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև տնտեսական անվտանգությանն ուղղված ջանքերը: Արդյունքում, օրինակ, ՄՍԾ տարածքային կենտրոնները համագործակցում են միջազգային կազմակերպությունների հետ՝ ըստ անհրաժեշտության տրամադրելով տեղեկատվություն աշխատանքի կարիք ունեցող տեղահանվածների վերաբերյալ՝ միջազգային կազմակերպություններին ուղղորդելով ըստ առկա կարիքների:

Ի վերջո, ՀՀ կառավարությունը արցախցիների սոցիալ-տնտեսական հարցերի լուծման համար ընտրել է ինտեգրման ռազմավարությունը և ներկայումս մշակում է ինտեգրման և վերաինտեգրման հատուկ ռազմավարություն: Հիմնական նպատակներից մեկն է չառանձնացնել բռնի տեղահանված անձանց որպես առանձին սոցիալական կատեգորիա, այլ նպաստել վերջիններիս ինտեգրմանը հայաստանյան հասարակությանը: Այս հիմնավորմամբ, ըստ ԱՍՀՆ տվյալների՝ դեռևս նախագծային փուլում գտնվող 2023-2030 թթ. զբաղվածության ռազմավարությամբ, հատուկ գլուխ նախատեսված չէ բռնի տեղահանված անձանց զբաղվածության հարցի վերաբերյալ, այլ փորձ է արվել այդ հարցն ընդգրկել ընդհանուր ծրագրերում:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը արցախցիների ուսուցման ու զբաղվածության հարցի լուծման նպատակով նախաձեռնել է մի շարք թիրախային ծրագրեր:

2.1. Բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության հատուկ ծրագիրը

2024 թվականի հունվարին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ուղղությամբ:[14]

Ծրագիրն առաջարկում է 3 տարբերակ՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ձեռք բերելու գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ, կարողություններ և աշխատանքային փորձ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու համար: Ծրագրում կարող

[14] ՀՀ կառավարության N 57-Լ որոշում «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին», , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188722 , (դիտված 05.06.2024 թ.):

են ընդգրկվել 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված այն անձինք, որոնք ՀՀ-ում զբաղված չեն «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի[15] 5-րդ հոդվածով սահմանված գործունեության որևէ տեսակով (գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեությունը, քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը, անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեությունը, արտոնագրային վճար վճարողի գործունեությունը, ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը, ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը) և «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում» առկա տեղեկատվության հիման վրա վերջին մեկ ամսվա ընթացքում չեն հանդիսացել հարկ վճարող աշխատող:

Ծրագիրն առաջարկում է բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովման 3 տարբերակ՝

Տարբերակ 1. Ուսուցման կազմակերպման միջոցով, որտեղ շահառուն ընդգրկվում է մինչև 6 ամիս տևողությամբ իրականացվող ուսուցման համապատասխան դասընթացում և տարածքային կենտրոն է ներկայացնում ուսումնական հաստատության կամ գործատուի հետ կնքված ուսուցման իրականացման պայմանագրի պատճենը: Ուսուցման ամբողջ ժամանակահատվածում ուսուցման իրականացման պայմանագրի հիման վրա շահառուին ամսական կտրվածքով վճարվում է՝ 1) ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 ՀՀ դրամի չափով՝ տվյալ ուսումնական ամսվա ընթացքում շահառուի՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան, 2) կրթաթոշակ՝ 50,000 ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ կրթաթոշակը վճարվում է տվյալ ուսումնական ամսվա ընթացքում շահառուի՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան:

Դասընթացն ավարտելուց ու վկայական ստանալուց հետո գործատուն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուի հետ կնքում է նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր՝ առնվազն 3 ամիս ժամկետով: Աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո 3 ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է գումար առավելագույնը 50,000 ՀՀ դրամի չափով շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

Տարբերակ 2. Աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի միջոցով, որտեղ գործատուի կողմից շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացն իր մոտ կազմակերպելու դեպքում ՄՍԾ տարածքային կենտրոնի, գործատուի և շահառուի միջև կնքվում է աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման մասին եռակողմ պայմանագիր: Պայմանագիրը կնքելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում գործատուն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուի հետ կնքում է նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր՝ առնվազն 6 ամիս ժամկետով: Շահառուի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո գործատուն 3 ամիս ժամկետով իր մոտ կազմակերպում է

[15] ՀՀ օրենքը «Զբաղվածության մասին», ընդունված՝ 2013 թվականի դեկտեմբերի 11-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190352, (դիտված՝ 06.06.2024 թ.):

շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթաց, որի ընթացքում գործատուին տրամադրվում է փոխհատուցում շահառուի աշխատավարձի վճարման համար՝ 165,000 ՀՀ դրամի չափով, ամսական կտրվածքով, ներառյալ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը: Գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպումից հետո 3 ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է գումար առավելագույնը 50,000 ՀՀ դրամի չափով շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

Տարբերակ 3. Ուսուցման և աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման միջոցով, որտեղ գործատուն առաջարկում է տարածքային կենտրոնին ուսուցման և իր մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպում, տարածքային կենտրոնի, գործատուի և շահառուի միջև կնքվում է ուսուցման և աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման մասին եռակողմ պայմանագիր: Պայմանագրի հիման վրա շահառուն ընդգրկվում է մինչև 6 ամիս տևողությամբ իրականացվող ուսուցման համապատասխան դասընթացում՝ ստանալով Տարբերակ 1-ով նախատեսված աջակցությունը: Ուսուցման ամբողջ ժամանակահատվածում շահառուին ամսական կտրվածքով վճարվում է 1) ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50,000 ՀՀ դրամի չափով՝ տվյալ ուսումնական ամսվա ընթացքում շահառուի՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան, 2) 50,000 ՀՀ դրամի չափով կրթաթոշակ, որը վճարվում է տվյալ ուսումնական ամսվա ընթացքում շահառուին՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան: Ընդ որում, գործատուն շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպելու նպատակով շահառուի ուսուցման վկայականը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուի հետ կնքում է նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր՝ առնվազն 6 ամիս ժամկետով: Աշխատանքային պայմանագիրը կնքվելուց հետո կիրառվում են Տարբերակ 2-ով նախատեսված պայմանները: Ուսուցումն ավարտելուց հետո առնվազն 6 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագիր չկնքելու դեպքում գործատուն ծառայությանն է վճարում հատուցում՝ իր առաջարկությամբ կազմակերպված ուսուցման ընթացքում շահառուին որպես ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ վճարված գումարի չափով:



Բռնի տեղահանված անձանց համար զբաղվածության այս ծրագրի իրականացման նկատմամբ մոնիտորինգ իրականացնող մարմին է ԱՍՀՆ՝ ի դեմս ՄՍԾ տարածքային կենտրոնների: ՄՍԾ տարածքային կենտրոնն ամսական առնվազն մեկ անգամ իրականացնում է շահառուների ուսուցման դասընթացներին մասնակցության և (կամ) գործատուի կողմից շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման, ծրագրի կատարման ընթացքի մոնիտորինգ՝ այցելությունների կամ զանգերի միջոցով:

Արցախցիների համար նախատեսված զբաղվածության ծրագրից 2024 թ. հունիսի 21-ի տվյալներով օգտվել է 910 բռնի տեղահանված արցախցի, որոնց 65 տոկոսը կանայք են և 27 տոկոսը երիտասարդներ: Ծրագրի իրականացմանը մասնակցում էր 586 գործատու, ընդ որում կային գործատուներ, որոնք պայմանագիր են կնքել միանգամից 3 և ավել բռնի տեղահանված անձի հետ: ԱՍՀՆ կողմից հուլիսի 26-ին տրամադրված տվյալների համաձայն ծրագրերի շահառուների թիվը աճել էր՝ 910-ից հասնելով 1045-ի[16]:

Ի սկզբանե արցախցիների զբաղվածության ապահովման այս ծրագիրը 2024 թվականի համար նախատեսել էր 1,000 մասնակցի հնարավորություն, բայց քանի որ ԱՍՀՆ կողմից 2024 թ. հունիս ամսվա դրությամբ արձանագրվել է 1,410 անձի կողմից պահանջարկ, ԱՍՀՆ առաջարկությամբ ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում[17] 2024 թ. ֆինանսավորելու ևս 500 անձի մասնակցություն այս ծրագրին:

Պետք է նշել, որ առավել կիրառելի է եղել ծրագրի երկրորդ տարբերակը, որից 2024 թ. հունիս ամսվա դրությամբ օգտվել է 908 բռնի տեղահանված, մինչդեռ նույն ժամանակահատվածում

[16] 2024 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ծրագրում ընդգրկվել է 1401 անձ, որից 917-ը (65,5 տոկոսը)՝ կին: Աշխատանքային փորձի ձեռքբերման բաղադրիչի շրջանակում ընդգրկված շահառուների թիվը հասնում է 1371-ի (887-ը՝ կին, 484-ը՝ տղամարդ):
[17] Հետք, 500 արցախցի աջակցություն կստանա աշխատանքային փորձ ձեռք բերելու համար, 20 հունիսի 2024 թ. https://hetq.am/hy/article/167544, (դիտված՝ 05.07.2024 թ.):

առաջին տարբերակից օգտվել է ընդամենը 2 անձ: Երրորդ տարբերակի իրականացման վերաբերյալ հունիս ամսվա դրությամբ տվյալներ առկա չէին:

Առաջին տարբերակի ցածր մասնակցությունը պայմանավորված էր մասնագիտական ուսուցում իրականացնելու համար ուսուցում կազմակերպող կազմակերպության՝ ԿԳՄՄՆ կողմից վարվող ուսուցման ազգային ռեեստրում որպես լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնող գրանցվելու պահանջով, որը սահմանված է Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգով:[18] Սակայն ԱՄՀՆ առաջարկությամբ ՀՀ կառավարությունը փոփոխություններ է կատարել ՀՀ կառավարության «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» որոշման մեջ, որի համաձայն 2024 թ. հունիսի 20-ից ուսուցման ռեեստրում գրանցվելու պարտադիր պահանջը հետաձգվել է մեկ տարով, այսինքն նախատեսված ուսուցման դասընթացները կազմակերպվելու են միայն 2025 թվականի հուլիսի 1-ից հետո:[19] Այժմ բռնի տեղահանված անձի համար ուսուցում կազմակերպելու համար պարտադիր չէ որևէ ռեեստրում գրանցվելը և գործատուն ինքը կարող է կազմակերպել նման ուսուցումը կամ կարող է ուղղորդել անձին համապատասխան ուսումնական հիմնարկ անհրաժեշտ հմտությունները փոխանցելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում շահառուներն աշխատանքի են տեղավորվել, հիմնականում, արտադրության, սպասարկման, բարձր տեխնոլոգիաների, առողջապահության, կրթության, շինարարության ոլորտներում: Ընդ որում, բարձրագույն կրթություն պահանջող մասնագիտություններն են՝ «ծրագրի ղեկավար», «գրաֆիկ դիզայն», «հրակայուն աշխատանքի կազմակերպիչ», «լաբորատոր ախտորոշման բժիշկ», «հոգեբան», «ադմինիստրատոր», «զբոսաշրջային ծառայությունների մասնագետ», «անասնաբույժ», «աուդիտոր», «մեթոդիստ», «դաստիարակ», «հաշվապահ», «օտար լեզուներ դասավանդող», «աուդիտոր», «կադրերի կառավարման մենեջեր» և այլն: Իսկ միջին մասնագիտական կրթություն պահանջող մասնագիտություններն են՝ «կարող», «դերձակ», «կահույքագործ», «մերսող», «հաշվետար», «բուժքույր», «խոհարար», «հրուշակագործ», «հացթուխ», «գործավար», «դաստիարակի օգնական», «օպերատոր», «վարորդ-առաքիչ», «դիմահարդար», «դիմահարդար», «վաճառող», «պահակ», «մալուխագործ», «գանձապահ», «ատաղձագործ», «ֆլորիստ դիզայներ» և այլն:

Ըստ հետազոտության արդյունքների՝ աշխատանքի տեղավորման հետ կապված մեծ խնդիր է տեղահանվածների շրջանում աշխատավարձի ակնկալիքների և իրական վարձատրության միջև մեծ խզվածքը, որը պայմանավորված է նրանով, որ Արցախում աշխատանքի դիմաց վարձատրության չափը հիմնականում ավելի բարձր էր: Բացի այդ, ծրագրի արդյունավետ իրականացմանը խոչընդոտում է նաև արցախցիների մշտական

[18] ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1062-Ն որոշում «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100589,(դիտված՝ 22.06.2024 թ.):

[19] ՀՀ կառավարության 20 հունիսի 2024 թվականի N 947-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 57-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194223, (դիտված՝ 30.06.2024 թ.):

տեղաշարժը ամբողջ հանրապետությունով, որը պայմանավորված է ավելի լավ կեցության պայմաններ գտնելու ցանկությամբ: Նման տեղաշարժերի հետևանքով ծրագրով աշխատանքի ընդունված բռնի տեղահանվածի հետ պայմանագիրը ընդհատվում է այդ տարածքում, և անձը կարող է նորից դիմել այդ ծրագրին մեկ այլ տարածքում, եթե առաջանում է նման հնարավորություն:

Խնդրահարույց է այն փաստը, որ ծրագրին մասնակցում է ընդամենը 3 հաշմանդամություն ունեցող անձ, իսկ 50-ն անց ու կենսաթոշակային տարիքի դիմումատուների պարագայում խնդիրն ավելի է բարդանում: ՄՍԾ տարածքային կենտրոնները դիմորդների ցուցակը ուղարկում են գործատուներին, որպեսզի գործատուն ինքը որոշի, թե ում հետ է ցանկանում համագործակցել ծրագրի շրջանակներում: Հավանականությունը մեծ չէ, որ գործատուն ընտրելու է 50 և ավել տարիքի անձի:

Ծրագրում չեն կարող ընդգրկվել նաև կենսաթոշակային տարիքի տեղահանվածները, քանի որ նրանք չունեն գործազուրկի կարգավիճակ և համարվում են պետության սոցիալական պաշտպանության համակարգից օգտվող անձինք և ստանում են կենսաթոշակ: Մինչդեռ կենսաթոշակային տարիքի բռնի տեղահանված անձինք նույնպես վարձակալում են բնակարաններ և կենսաթոշակով վարձակալության բարձր արժեքների պարագայում զբաղվածություն ունենալը անհրաժեշտություն է: Բացի այդ, ընդամենը 1,500 անձի 6-9 ամսով զբաղվածության ծրագրում ընդգրկելը բավարար չէ բռնի տեղահանված անձանց համընդհանուր զբաղվածության խնդիրը լուծելու համար, քանի որ այն չի ապահովում կայուն զբաղվածություն և ծածկում է քիչ քանակով տեղահանվածների զբաղվածության կարիք քիչ ժամանակային կտրվածքով: Ստացվում է այնպես, որ գործատուն 6 ամսից հետո շահագրգռված չի լինի, օրինակ, արհեստավորների դեպքում (հաճախորդների սակավությամբ պայմանավորված) պահել աշխատատեղում, քանի որ այլևս եկամտահարկը չի փոխհատուցվելու, իսկ աշխատողը դեռևս չի կարող ապահովել կայուն եկամուտ, քանի որ բավարար հաճախորդներ դեռ չունի:

Ծրագրում որպես հատուկ թիրախ խումբ ներգրավված չեն հաշմանդամություն ունեցող անձիք: Հատկապես բենզինի պահեստի պայթյունի հետևանքով բռնի տեղահանված արական սեռի անձանց որոշակի մասը ունի կարողությունների մշտական կամ ժամանակավոր սահմանափակումներ, սակայն չի դասակարգվում որպես պատերազմի մասնակից կամ հաշմանդամություն ունեցող անձ, և հետևաբար որևէ հատուկ ծրագիր նման անձանց համար նախատեսված չէ, իսկ ընդհանուր հիմունքներով տվյալ ծրագրից օգտվելու դեպքում գործատուների կողմից հատուկ հարմարությունների ապահովմամբ այդ անձանց աշխատանքի ընդունելու հավանականությունը փոքր է:

Ծրագրի ընթացիկ մոնիտորինգը, ըստ էության, կախված է ՄՍԾ տարածքային կենտրոնների զբաղվածության բաժիններից, որոնք կատարում են պարբերական այցեր գործատուների շրջանում: Սակայն, սահմանափակ մարդկային ռեսուրսների պարագայում ՄՍԾ ՏԿ-ները չեն կարող ամբողջ ծավալով իրականացնել մոնիտորինգի ֆունկցիան, իսկ այլ մոնիտորինգի համակարգ այս պահին, ըստ էության, գոյություն չունի, բացի գործատուի կողմից ամսվա կտրվածքով աշխատողի օրական հաճախումների մասին տեղեկանքի ներկայացումը համապատասխան ՄՍԾ տարածքային կենտրոն: Հետևաբար, ստացվում է, որ ԱՍՀՆ-ն հստակ մշակված ընթացիկ մոնիտորինգի և ծրագրի արդյունավետության ստուգման գործիք չունի ու որպես այդպիսին, նախատեսում է ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացնել միայն տարեվերջին՝ որպես

ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված ծրագրի գնահատում, ինչը հնարավորություն չի տալիս պատշաճ ժամկետներում շտկել խնդիրները:

Բացակայում են նաև բողոքարկման հստակ մեխանիզմները՝ բացառությամբ ԱԱՏՄ և ՄՍԾ դիմելու հնարավորությունից: Թեև որպես այլընտրանք գործում է նաև ԱՍՀՆ թեժ գիծը՝ 114 հեռախոսահամարը. հետազոտության ընթացքում ունեցած հարցազրույցներն ու քննարկումները վկայում են տվյալ հեռախոսահամարի պարբերաբար անհասանելի լինելու մասին:

2.2. Բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագիրը

ՀՀ կառավարությունը «2023 թվականի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրն» ընդունել է 2023 թվականի հոկտեմբերի կեսին:[20] Այս ծրագրի շահառու է այն ուսուցիչը, որը 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում բնակություն է հաստատել Հայաստանում, ունի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով[21] մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք և ցանկություն ունի աշխատելու Հայաստանի մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Ծրագիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերում Երևանում հաստատված և մարզերում բնակվող ուսուցիչների միջև և միայն վերջիններին տրամադրում է լրացուցիչ վճար մարզերում ուսուցչի թափուր հաստիքը համալրելու պարագայում: Ըստ որոշման՝ տվյալ ծրագրի շրջանակներում ուսուցչին ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից տվյալ հաստատության միջոցով հատկացվում է լրավճար՝ մանկավարժական աշխատավարձի 30 տոկոսի չափով, իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ ու Վարդենիս համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջևան ու Բերդ համայնքների հաստատությունների նույն ծրագրից օգտվող ուսուցիչներին՝ ևս 50,000 ՀՀ դրամ ֆիքսված լրավճար: Նշված հատկացումները հաստատությանը տրամադրվում են համապատասխան մարզպետի աշխատակազմի (նախարարության ենթակայությամբ գործող հաստատության դեպքում՝ նախարարության) կողմից՝ եռամսյակային կտրվածքով:

Ծրագրի 12-րդ կետի համաձայն՝ ՀՀ մարզպետների աշխատակազմերը եռամսյակը մեկ անգամ դպրոցների տնօրեններից ստանում և ԿԳՄՍՆ են ներկայացնում ծրագրի շրջանակներում իրենց մարզի հաստատություններում աշխատող մասնագետների մասին տեղեկատվություն:

Ըստ ԿԳՄՍՆ տվյալների՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1756-L որոշմամբ հաստատված «2023 թվականի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրով» 2023 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2024 թվականի մայիս ամիսը ուղեգրվել է 353 ուսուցիչ, որոնցից 345-ը 2024 թ. սեպտեմբերի տվյալներով աշխատում են համապատասխանաբար Արագածոտնի մարզում՝ 24,

[20] ՀՀ կառավարության 12 հոկտեմբերի 2023 թվականի N 1756-L որոշում, «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183992, (դիտված՝ 20.05.2024 թ.):

[21] ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», ընդունված՝ 2009 թվականի հուլիսի 10-ին, ,https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 , (դիտված՝ 20.05.2024 թ.):

Արարատի մարզում՝ 67, Արմավիրի մարզում՝ 51, Գեղարքունիքի մարզում՝ 13, Լոռու մարզում՝ 43, Կոտայքի մարզում՝ 83, Շիրակի մարզում՝ 15, Սյունիքի մարզում՝ 34, Վայոց Ձորի մարզում՝ 10 և Տավուշի մարզում՝ 5 ուսուցիչ: Ծրագրով աշխատանքի տեղավորված ուսուցիչներից 8-ը բնակավայրի փոփոխության և այլ պատճառներով դադարեցրել է աշխատանքը:

Մարզային դպրոցներում տեղավորված արցախցի ուսուցիչներից հավելավճար ստանում են ոչ բոլորը: ԿԳՄՍ-ն հաստատել է, որ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթով դպրոց ընդունված ուսուցիչը չի համարվում վերը նշված ծրագրի շահառու և չի կարող օգտվել ծրագրում նշված հավելավճարից:

Մարզերում ուսուցիչներին որոշ դեպքերում աշխատանք է առաջարկվել 2 տարբեր գյուղերում, մինչդեռ գյուղերի միջև հեռավորությունը մեծ է, տրանսպորտային ծախսերը հաշվի չեն առնվում, իսկ 2 գյուղերի դպրոցներում դասաժամերի գումարային չափը չի բավարարել նույնիսկ մեկ դրույքին: Նման դեպքերում արցախցի ուսուցիչները նախընտրել են հրաժարվել մասնագիտական աշխատանքից ու սկսել են աշխատել սպասարկման ոլորտում՝ ավելի բարձր վարձատրությամբ, քան ուսուցչի նույնիսկ մեկ դրույքով նախատեսվող աշխատավարձի չափն է: Նման որոշմանն է դրդում նաև այն հանգամանքը, որ Արցախում կրթության ոլորտում աշխատավարձերը կրկնակի ավելի բարձր էին, քան Հայաստանում:

Ծրագրի էական թերություն է և խիստ խնդրահարույց է ՀՀ կառավարության որոշման մեջ առկա այն դրույթը, ըստ որի Հայաստանի մարզային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում որևէ առարկայից ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում, սահմանված կարգով ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու կամ մրցույթը չկայանալու պարագայում միայն բռնի տեղահանված ուսուցիչը կարող է հավակնել դառնալու ծրագրի մասնակից և ստանալ լրավճար: Այսինքն, տեղահանված փորձառու ուսուցիչը կարող է օգտվել նման հնարավորությունից միայն այն պարագայում, երբ որ մրցույթին այլ անձ չի մասնակցել և/կամ մրցույթը չի կայացել: Ընդ որում, պայմանագրի ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման պահից մինչև 2-րդ ուսումնական տարվա ավարտը, իսկ սույն ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում (բացառությամբ բնակության վայրի փոփոխությամբ պայմանավորված դեպքերի) տվյալ ուսուցիչը զրկվում է ծրագրից կրկին օգտվելու իրավունքից:

Այնպես է ստացվում, որ ուսուցչի թափուր հաստիքի մրցույթին մասնակցած բռնի տեղահանված անձը փաստացի գտնվում է ավելի անբարվոք վիճակում և, եթե ցանկանում է ստանալ հավելավճար, պետք է սպասի մինչև որ հաստիքը չհամալրվի նոր անցնի աշխատանքի որպես դպրոցների համար «այլընտրանքային ուսուցիչ» կամ տեղափոխվի այլ համայնք/մարզ փնտրելու համապատասխան հնարավորություն:

2.3. Զբաղվածության ընդհանուր ծրագրերում բռնի տեղահանված անձանց ներառումը

Արցախից բռնի տեղահանված անձինք կարող են օգտվել նաև ՀՀ պետական զբաղվածության այլ ծրագրերից ընդհանուր հիմունքներով՝ առանց որևէ խտրականության:

2022 թվականի հուլիսի 21-ի N 1179-L որոշմամբ մեկնարկել է զբաղվածության ծրագիր[22] Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման համար: Ուշագրավ է, որ ըստ ԱՍՀՆ փոխանցած տվյալների՝ 2024 թ. հունիսի 21-ի տվյալներով՝ սույն ծրագրով ընդգրկված է 128 բռնի տեղահանված անձ:

2014 թվականից Հայաստանում գործում է սեզոնային զբաղվածության ապահովման ծրագիր,[23] այնուամենայնիվ 2024 թ. հունիս ամսվա տվյալներով որևէ բռնի տեղահանված անձ ներգրավված չէ այս ծրագրում: Ըստ ամենայնի, սա պայմանավորված է տվյալ ծրագրում ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողատարածք ունենալու պահանջով, մինչդեռ ըստ օրենսդրության՝ սեփականության իրավունքով հողատարածք կարող են ձեռք բերել միայն ՀՀ քաղաքացիները, իսկ բռնի տեղահանված անձինք զրկված են նման հնարավորությունից: Ինչ վերաբերում է հողատարածքի վարձակալությանը, հողատարածքի սեփականատերերը սովորաբար հրաժարվում են կնքելու վարձակալության պայմանագրեր, քանի որ ստիպված կլինեն վճարել վարձակալության հարկ, այդ իսկ պատճառով տեղահանված անձը չի կարող վարձակալության պայմանագիր ներկայացնել ծրագրին մասնակցելու համար:

ԵՄ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և պետության համատեղ ջանքերով 2023 թ. աշնանից մեկնարկել է նոր ծրագիր, որտեղ ներառականության սկզբունքով ընդգրկված են նաև բռնի տեղահանվածները: ԵՄ կողմից ֆինանսավորվող «Կառուցելով սոցիալական պաշտպանության դիմակայուն համակարգ» և ՄԱԶԾ-ի կողմից ֆինանսավորվող «ՄԱԶԾ-կառավարություն գործընկերության ծրագրի ընդլայնում (Հարթակ #5)» ծրագրերի շրջանակներում ՄԱԶԾ ImpactAIM աքսելերատորը հայտարարել էր մրցույթ՝ համագործակցելու քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ) և մասնավոր ընկերությունների հետ: Ծրագրով նախատեսված է ապահովել մինչև 300 շահառուի զբաղվածությունը 8 կազմակերպություններում, որոնք ՄԱԶԾ կողմից իրականացված բաց մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել:[24]

Ծրագրի շահառու են Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից՝

- 18-29 տարեկան երիտասարդները (չաշխատող, չսովորող), որոնք չեն եղել գրանցված աշխատող վերջին 6 ամիսների ընթացքում և/կամ,
- 30 և 40 տարեկան չաշխատող կանայք, որոնք չեն եղել գրանցված աշխատող վերջին 6 ամիսների ընթացքում և/կամ,
- ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող շահառուները,

[22] ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1179-L որոշում, «Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166654, (դիտված՝ 05.06.2024 թ.):

[23] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ գյուղատնտեսության նախարարի համատեղ N 74-Ն հրամանը «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման զբաղվածության պետական ծրագրի համատեղ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109702, (դիտված՝ 04.07.2024 թ.):

[24] ՄԱԶԾ, մրցույթի հրավեր, https://armenia.un.org/hy/243973-%D5%B4%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9, (դիտված՝ 06.07.2024 թ.):

- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք:

Ծրագրի մոնիտորինգի և գնահատման տեսանկյունից տեղեկատվություն դեռևս առկա չէ:

Հատկանշական է, որ թե՛ հատուկ, թե՛ ընդհանուր զբաղվածության ծրագրերում ներգրավվածության տեսանկյունից, թե՛ այլ սոցիալական աջակցության ծրագրերի ուղղորդված տրամադրման տեսանկյունից բացակայում է ծրագրերի միջև կոնսոլիդացիան և ծրագրերի հիման վրա տեղահանված անձանց խնդիրներին կարիքահեն արձագանքը: Այսպես, օրինակ, բնակարանային ապահովության ծրագրի ու զբաղվածության ապահովման ծրագրերի միջև կապի բացակայության պատճառով արցախցիները, թեև ցանկություն կարող են ունենալ հաստատվելու ու բնակարան ձեռք բերելու մարզերում, սակայն աշխատանքի բացակայության պատճառով ստիպված են տեղափոխվել Երևան կամ մարզկենտրոններ զբաղվածության հարցը լուծելու նպատակով: Դա է այն պատճառներից մեկը, որ զբաղվածության ապահովման հատուկ ծրագրի մասնակիցները անընդհատ տեղաշարժվում են Հայաստանում, ինչի հետևանքով ծրագիրը պարբերաբար ընդհատվում է:

3. Բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանությունը

Բռնի տեղահանված արցախցիների աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խախտումների կանխման տեսանկյունից կարևոր է տեղահանվածների շրջանում օրենսդրության ու իրավասու մարմինների միջոցով իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրազեկվածության բարձրացումը:

Ըստ ԱԱՏՄ տվյալների՝ արցախցիների կողմից աշխատանքային իրավունքների խախտումների հետ կապված թեժ գծի միջոցով դիմում-բողոք չի ստացվել, իսկ բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովման ծրագրերի իրագործման նկատմամբ վերահսկողական լիազորություն ԱԱՏՄ-ին վերապահված չէ: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 33-ի[25]՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ԱԱՏՄ-ն՝ որպես ոլորտի լիազոր տեսչական մարմին՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ:

Չնայած Արցախում նմանատիպ տեսչական մարմին գոյություն ուներ, սակայն կրում էր ձևական բնույթ և բնակչության շրջանում հայտնի չէր, ուստի տեսչական մարմինների միջոցով աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմը արցախցիների շրջանում տարածված չէ: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ նման իրավիճակ առկա է նաև Հայաստանում՝ ՀՀ քաղաքացիների շրջանում: Բացակայում է իրազեկվածությունը տեսչական մարմնի գոյության, լիազորությունների մասին, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության և գործատուների նկատմամբ վերահսկողության համատեքստում:

[25] ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194077, (դիտված՝ 20.05.2024 թ.):

Բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից պակաս կարևոր չէ նաև արհեստակցական միությունների գործունեությունը: Այս տեսանկյունից ուշագրավ է Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի կողմից արցախցի գործընկերների հետ համագործակցությունը՝ ներգրավելով Արցախի արհեստակցական միության անդամներին կոնֆեդերացիայի ծրագրերում, ինչպես նաև սատարելով «Վերածնունդ» տեղահանված անձանց արհեստակցական կազմակերպության ստեղծմանը, որը ներկայումս ունի ավելի քան 300 անդամ, որոնք բռնի տեղահանված արցախցիներ են:

4. Արցախցիների աշխատանքային իրավունքների և զբաղվածության հարցերով տարբեր դերակատարների ջանքերը և համագործակցությունը

Տեղահանման առաջին իսկ օրերից ՀՀ-ում թե՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, թե՛ մասնավոր կազմակերպությունները ձեռնամուխ են եղել հատուկ ծրագրերի մշակմանը՝ ուղղված արցախցիների զբաղվածության հարցի լուծմանը, ինչը թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ հոգեբանական մեծ աջակցություն էր ապրուստի միջոցներից ու սեփականությունից զրկված արցախցիների համար, որոնք բախվել են մի շարք մարտահրավերների: Հասարակական կազմակերպությունները՝ միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ, ցայսօր մշակում և իրականացնում են մի շարք նախագծեր, որոնք միտված են արցախցիների զբաղվածության ապահովմանը, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, բիզնես հիմնելու կապիտալ ու գիտելիքներ տրամադրելուն, նոր մասնագիտություններ ձեռքբերելուն, ինչպես նաև տեղահանված կանանց տնտեսական հզորացմանը: Հավելված 1-ում ներկայացված են մի շարք ծրագրեր, որոնք իրականացվել և/կամ իրականացվում են հայաստանյան ՔՀԿ-ների և միջազգային դոնորների համագործակցությամբ, ինչպես նաև մասնավոր հատվածի դերակատարների միջով:

2024 թ. հունիս ամսվա տվյալներով ոչ պետական դերակատարների կողմից աշխատանքային կողմնորոշման և աշխատանքի տեղավորման հետ կապված նախաձեռնությունները նվազել են:

Մասնավոր ոլորտի ծրագրերը մեծ պահանջարկ են վայելում բռնի տեղահանված անձանց շրջանում, ու դրանց շարունակականության ապահովումը,մասնավոր ոլորտի ներգրավումը տարբեր ծրագրերում մեծ նշանակություն ունի զբաղվածության հարցի լուծման և որակյալ կադրեր ստանալու հարցում, սակայն այս ծրագրերն էականորեն պակասել են կամ տեսանելի չեն: Արցախցիների զբաղվածության ապահովմանը միտված հիմնական ծրագրերը ներկայում իրականացվում են կամ պետության կողմից վերոնշյալ ծրագրերի շրջանակներում, կամ միջազգային կառույցների ֆինանսավորմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքի արդյունքում վերհանվել են բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքներն իրացնելու ու զբաղվածության ապահովման հետ կապված

մի շարք խնդիրներ,[26] որոնց հասցեագրման նպատակով ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Թեև ՀՀ կառավարության կողմից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված զբաղվածության ծրագրին դիմումատուների հատուկ սահմանափակում չկա, սակայն արդյունքները ցույց են տալիս, որ ծրագրում ներգրավվածների շարքում բացակայում կամ փոքր մաս են կազմում որոշ խոցելի խմբեր, ինչպես, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձիք, այդ թվում՝ Արցախում բենզինի պահեստի պայթյունի հետևանքով վիրավորվածները: Բացի այդ, 50 և ավել տարիքի դիմումատուները փաստացի չեն կարողանում դառնալ ծրագրի շահառու, քանի որ գործատուների մեծ մասը միտված չէ աշխատանքի ընդունելու այդ տարիքի անձանց: Ծրագրերից չեն կարող օգտվել նաև թոշակառուները, քանի որ պետությունը համարում է, որ նրանք արդեն իսկ օգտվում են սոցիալական պաշտպանության ընդհանուր համակարգից և զբաղվածության առաջնային կարիք չունեն, մինչդեռ հաշվի չեն առնվում տեղահանման փաստով պայմանավորված նրանց կարիքներն ու ծախսերը: Եվ վերջապես սահմանափակ քանակով անձանց մի քանի ամսով զբաղվածության ծրագրում ընդգրկելը բավարար չէ բռնի տեղահանված անձանց համընդհանուր զբաղվածության խնդիրը լուծելու և կայուն զբաղվածություն ապահովելու համար:

Բռնի տեղահանված անձանց համար գործարկված ուսուցման և աշխատանքի տեղավորման հատուկ ծրագիրը չունի ընթացիկ մոնիտորինգի ու գնահատման համակարգ և արդյունավետ մեթոդաբանություն: Բացակայում են նաև բողոքարկման հստակ մեխանիզմները՝ բացառությամբ թեժ գծի հեռախոսահամարի կամ անձամբ ՄՍԾ տարածքային կենտրոն ներկայանալու հնարավորության:

Ուսուցիչների համար հաստատված հատուկ ծրագրից փաստացի դուրս են մնում այն ուսուցիչները, որոնք աշխատանքի են ընդունվել մրցութային կարգով:

Թե՛ հատուկ, թե՛ ընդհանուր զբաղվածության ծրագրերում ներգրավվածության տեսանկյունից, թե՛ այլ սոցիալական աջակցության ծրագրերի ուղղորդված տրամադրման տեսանկյունից բացակայում են ծրագրերի միջև կոնսոլիդացիան և ծրագրերի հիման վրա տեղահանված անձանց խնդիրներին կարիքահեն արձագանքը:

Տեղահանված անձանցից շատերը բախվում են այն խնդրին, որ իրենց մասնագիտացմամբ աշխատանքը Արցախում և ՀՀ-ում տարբեր բնույթ է կրում, և օրենսդրական ու գործառնական դաշտը այդ մասնագիտությունների գծով նույնպես տարբերվում է, մինչդեռ մասնագիտական վերապատրաստման դասընթացները սահմանափակ են:

Արցախում բնակչության մեծամասնությունը կա՛մ հանրային, կա՛մ ուժային կառույցների ծառայող էր, իսկ ներկայումս, ՀՀ քաղաքացիություն չունենալու պատճառով կամ

[26] Հետազոտությունը չի վերհանել մի շարք ոլորտների խնդիրները: Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության առումով առկա են բազմաթիվ խնդիրներ, քանի որ Արցախի գյուղական համայնքներում նախկինում բնակված տեղահանված անձինք կորցրել են իրենց ապրուստի միջոցները՝ այգիները, անասունները, գործիքները: Կամ Արցախում շինարարական գործունեություն ծավալած ընկերությունները Հայաստանի պետական կամ համայնքային գնումներին մասնակցելիս չեն կարողանում ապահովել ակնկալվող կանխավճարը՝ որպես բանկային երաշխիք:

քաղաքացիություն ստանալու երկար ընթացակարգով պայմանավորված, տեղահանված անձինք զրկված են հանրային ծառայությունում ներգրավվելու հնարավորությունից:

Բռնի տեղահանված անձանցից շատերը չունեն բավարար անձնական կապիտալ բիզնեսը վերաբացելու համար: Արհեստներին տիրապետող և Արցախում արհեստով վաստակող տեղահանվածներից շատերը չեն կարողանում շարունակել աշխատանքը, քանի որ գործիքները թողել են Արցախում:

Արցախցիների շրջանում բացակայում է իրազեկվածությունը ԱԱՏՄ գործունեության և աշխատանքային իրավունքները պաշտպանելու հնարավորությունների մասին:

Բռնի տեղահանված և մարզերում հաստատված բնակչության շրջանում գործազրկության մակարդակը ավելի բարձր է աշխատաշուկան ավելի փոքր լինելու, ինչպես նաև ցածր աշխատավարձերի հետևանքով: Թեև սա Հայաստանի համատեքստում ընդհանուր խնդիր է, սակայն դրան ավելանում է այն հանգամանքը, որ սեփականության իրավունքով գյուղատնտեսական նշանակության հողատարածք ձեռք բերելու հնարավորություն արցախցիները չունեն, քանի որ նման իրավունք կարող են ձեռք բերել միայն ՀՀ քաղաքացիները, իսկ հողամաս վարձակալելու համար տեղահանվածները բախվում են այն խնդրին, որ հողի սեփականատերերը չեն ցանկանում մտնել հարկային դաշտ և վճարել վարձակալության հարկերը, ինչի հետևանքով էլ պետության կողմից սեզոնային աշխատանքների աջակցության ծրագրից արցախցիները չեն կարող օգտվել:

Զբաղվածության հատուկ ծրագրեր

16. Պետության կողմից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված զբաղվածության ծրագրի շրջանակում հատուկ քայլեր ձեռնարկել կամ զբաղվածության այլ ծրագրեր մշակել հաշմանդամություն կամ սահմանափակ կարողություններ ունեցող, ինչպես նաև 50+ տարիքի անձանց զբաղվածության հարցը լուծելու համար: Քայլեր ձեռնարկել նաև թոշակառուների շրջանում զբաղվածության հատուկ ծրագրեր մշակելու ուղղությամբ:
17. Ավելացնել տեղահանված անձանց զբաղվածության ապահովման ծրագրով մասնակիցների քանակը, ինչպես նաև երկարաձգել գործատուների համար եկամուտների վերադարձի հնարավորությունը մինչև 18 ամիս:
18. Բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագրով նախատեսված լրացուցիչ հատկացվող լրավճարը տրամադրել նաև մրցութային կարգով աշխատանքի ընդունված ուսուցիչներին:

Մասնագիտական ուսուցում/վերապատրաստման դասընթացներ

19. Մասնագիտական խմբերի՝ օրինակ, հաշվապահների, դատավորի օգնականների և այլ հատուկ մասնագիտությունների համար պետության կողմից կամ պետության կողմից պատվիրակված կազմակերպության և ՊՈԱԿ-ների միջոցով կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, այդ թվում՝ դրամաշնորհների միջոցով ներգրավելով մասնագիտական միավորումներին, արհեստակցական միություններին և այլ առնչվող կազմակերպություններին:

Պետական ծառայության հասանելիությունը բռնի տեղահանված անձանց համար

20. Նախատեսել փոփոխություններ համապատասխան ոլորտային օրենսդրությունում և օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով սահմանել հատուկ հնարավորություն ՀՀ կառավարության որոշմամբ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող բռնի տեղահանված արցախցիների համար զբաղեցնելու հանրային ծառայության պաշտոններ թափուր տեղեր առաջանալու և քննությունները հաղթահարելու դեպքում՝ առաջիկայում ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու պայմանով:

Տնտեսական հզորացման ծրագրեր

21. Քարտեզագրել արհեստագործական կրթություն/փորձառություն ունեցող բռնի տեղահանված մասնագետներին ու, ըստ այդմ, վերջիններիս առաջարկել աշխատանք արհեստագործների կարիք ունեցող պետական և ոչ պետական հաստատություններում թե՛ մարզերում, թե՛ մայրաքաղաքում:
22. Մշակել հատուկ ծրագրեր Երևանում և մարզերում տեղահանված անձանց բիզնեսների վերաբացման համար, որը կներառեր թե՛ ՀՀ հարկային դաշտի և բիզնես սկսելու ընթացակարգերին ուսուցողական նպատակով ծանոթացում, թե՛ նախնական կապիտալ. դրամաշնորհների և սուբսիդիաների տրամադրում գործիքների և սարքավորումների ձեռք բերման կամ տարածքի վարձակալության նպատակով:

Մարզային զբաղվածություն

23. Զբաղվածության ապահովման ծրագրում նախատեսել գյուղատնտեսական գործունեության խթանման բաղադրիչ՝ նախատեսելով համապատասխան լիզինգային ծրագրեր:
24. Զբաղվածության նոր ռազմավարության ներքո դիտարկել մարզային/համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հնարավորությունը՝ ուղղված մարզերում հաստատված բռնի տեղահանված անձանց զբաղվածության ապահովմանը: Որպես տարբերակ, կարող է նախատեսվել հողամասը վարձակալությամբ բռնի տեղահանված անձանց տրամադրելու դեպքում վարձակալության հարկի վերադարձի արտոնություն տրամադրելը հողամասի սեփականատիրոջը:

Իրազեկվածություն

25. Իրականացնել իրազեկման արշավներ, այդ թվում՝ արցախի բարբառով՝ արցախցիներին ծանոթացնելու զբաղվածության և վերապատրաստման ծրագրերին:
26. Բարձրացնել աշխատանքային իրավունքների և ԱԱՏՄ վերաբերյալ իրազեկվածությունը հատուկ տեղեկատվական թերթիկների կամ հեռուստատեսությամբ ու սոցիալական ցանցերում կարճ տեսանյութերի տարածման միջոցով:

Զբաղվածության ծրագրերի/նախաձեռնությունների համակարգում

27. Փոխկապակցել/սինխրոնացնել պետական աջակցության, այդ թվում՝ զբաղվածության ու բնակարանային ապահովման ծրագրերը, որպեսզի հնարավոր լինի տրամադրել համակարգված նպատակային աջակցություն՝ բռնի տեղահանվածների կարիքների հիման վրա:
28. Մշակել և ներդնել հատուկ ծրագրերի միջանկյալ մոնիտորինգի ավելի արդյունավետ մեխանիզմներ և մեթոդաբանություն, այդ թվում՝ վիճակագրության վարում, որը հնարավորություն կտա ժամանակին բացահայտել ծրագրի կարիքներն ու թերությունները՝ ի լրումն վերջնական գնահատման իրականացմանը, որը նախատեսվում է տարեվերջին:
29. Դիտարկել բողոքների ներկայացման ու հաշվառման հատուկ համակարգի ստեղծումը, ինչպես նաև ծրագրի օնլայն՝ իրական ժամանակով մոնիտորինգ իրականացնելու հնարավորությունը, որտեղ մասնակիցների թվին, ոլորտային ներգրավվածությանը, բողոքների քանակին ու բնույթին իրական ժամանակով հետևելու համակարգը հնարավորություն կտա ժամանակին բացահայտել ծրագրի կարիքներն ու թերությունները:
30. Բռնի տեղահանված անձանց զբաղվածության հարցի լուծման գործում ապահովել արդյունավետ համագործակցություն հասարակական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես կարիքների վերհանման և տեղեկատվության փոխանակման առումով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ոչ պետական դերակատարների կողմից իրականացված ծրագրեր

ՔՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրեր

Կարմիր խաչի ազգային ընկերությունը՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ, Երևանում և մարզերում իրականացնում է է բռնի տեղահանված անձանց զբաղվածության աջակցության ծրագիր:, Ծրագրի նպատակն է նեղ մասնագիտական վերապատրաստումներ կազմակերպելը, ինքնազբաղվածություն ապահովելու նպատակով նոր բիզնես հմտություններ տրամադրելը, ինչպես նաև տեղահանված անձանց կողմից բիզնես պլան առաջարկելու դեպքում մրցութային կարգով դրամաշնորհներ տրամադրելը:[27]

«Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամը 2024 թ. մայիս ամսից սկսել է ՄԱԶԾ «Նպաստելով զարգացմանը՝ կանխարգելելու ճգնաժամը» ծրագրի Երևանի բաղադրիչի իրականացումը: Ծրագրի նպատակն է Երևան քաղաքում աջակցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված խոցելի անհատներին և նրանց ընտանիքներին՝ հիմնելու կամ զարգացնելու միկրո-ձեռնարկատիրական անհատական/ընտանեկան գործունեություն՝ տրամադրելով մինչև 3,000 ԱՄՆ դոլարին համարժեք ոչ կանխիկ դրամաշնորհ բիզնես գործունեության շրջանակում անհրաժեշտ գույք, տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:[28]

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) իրականացնում է «Լեռնային Ղարաբաղի փախստականների մարդասիրական օգնություն և ներգրավում» ծրագիրը («Սովորիր և վաստակիր. Արցախ»)՝ HEKS/EPER կազմակերպության ֆինանսավորմամբ, «Շեն» ԲՀԿ-ի և «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ի հետ համատեղ:[29] Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել արցախցիների մասնագիտական կողմնորոշմանը, աշխատանքային շուկայում մրցունակ դառնալուն: Ծրագիրը հասանելի է ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչները՝ խորհրդատվություն և ուղղորդում, ուսուցում և հմտությունների զարգացում, ձեռներեցություն և զբաղվածության աջակցություն, «Հմտությունների լաբ»:

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամն իր գործունեությունն էր ծավալում Արցախում և բռնի տեղահանումից հետո Արցախում աշխատող 8 ուսուցիչների վերատեղավորել է Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում: Արցախից տեղահանված ևս 6 հոգի դիմել են «Ուսուցիչների առաջնորդության երկամյա ծրագրին» և վերապատրաստման ավարտից հետո 2 ուսումնական տարով գործուղվել են մարզային դպրոցներ: Բացի այդ, Արցախից տեղահանված ևս 2 անձ ներգրավվել է հիմնադրամում՝ որպես աշխատակազմի անդամ: Ավելին, «Արտակարգ իրավիճակներում կրթություն» ծրագրի շրջանակներում բռնի տեղահանված 3 ուսուցիչ ներգրված է որպես համակարգող Շիրակի և Կոտայքի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում՝ համակարգելու տեղահանված աշակերտների համապարփակ աջակցության գործընթացը: Հիմնադրամը

[27] Կարմիր խաչի և կարմիր մահիկի ֆեդերացիա, https://ee.ifrc.org/x/0ZqiGsDg?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR3R8hEA500tF-681q7io-1afuEH_rHnwBkm5L83XS2rSbnC0U0oAlHsq5k_aem_h1aoI9amYZAaGRw4ehEzhw, (դիտված՝ 02.08.2024 թ.):

[28] «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի պաշտոնական ֆեյսբուք էջ, https://www.facebook.com/share/wWEqkyAUARPZrBZX/ , (դիտված՝ 05.08.2024 թ.):

[29] ՀԲԸՄ, https://agbu.am/leap, (դիտված՝ 05.08.2024 թ.):

շարունակում է դիտարկել արցախցի ուսուցիչների մասնակցությունը իր առաջիկա ծրագրերում:

Եվրասիա համագործակցության հիմնադրամն իր ընթացիկ ընդհանուր ծրագրերի շրջանակներում աջակցում է Արցախից տեղահանված ու ՀՀ-ում վերագրանցված, ինչպես նաև Հայաստանում գործող մի շարք ՔՀԿ-ների նախագծերին, որոնց ուղղակի շահառուները տեղահանված արցախցիներն են: Այս ծրագրերի շնորհիվ 2023 թ. նոյեմբեր-դեկտեմբերից սկսած մոտ 20 արցախցի՝ մեծամասամբ հոգեբաններ, իրավաբաններ, կին ձեռներեցներ, ՔՀԿ աշխատակիցներ, ունի զբաղվածություն: Հիմնադրամի ֆինանսավորմամբ մի շարք ՔՀԿ-ներ սկսել են իրագործել զբաղվածության ապահովմանն ուղղված հատուկ ծրագրեր: Օրինակ՝ *«Ասկերանցիներ» համայնքային կարգացման կենտրոն* ՀԿ-ի «Վերածնունդ» ծրագրի նպատակն է բռնի տեղահանված կանանց հմտությունների և գիտելիքների բարելավումը փոքր բիզնես վարելու համար: Բիզնեսների հիմնական ոլորտներն են անասնապահությունը, հրուշակագործությունը, մոմագործությունը, հուլունքագործությունը, դերձակությունը, մանկական միջոցառումների կազմակերպումը՝ մուլտիերոսների մասնակցությամբ: Ծրագրի շահառուները 13 արցախցի կանայք են Երևանից և մարզերից՝ Մեծամոր, Արզական, Չարենցավան, Կապան և այլն: Մեկ այլ դրամաշնորհառու՝ *Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոնն* իրականացրել է «Արցախի փախստականների ինտեգրումը ՀՀ հասարակական և վերլուծական դաշտերում» ծրագիրը,[30] որի հիմնական շահառուները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք են, այդ թվում՝ ուսանողներ, որոնք հետաքրքրված են ՔՀԿ-ների և վերլուծական կենտրոնների աշխատանքով: Ծրագրում ընդգրկված մոտ 20 մասնակիցներն այցելել են Հայաստանում գործող ՔՀԿ-ներ և վերլուծական կենտրոններ՝ խորացված գիտելիքներ ստանալու համապատասխան թեմաների մասին: Ծրագրի արդյունքում աշխատանքի է ընդունվել Արցախից տեղահանված 2 անձ:

Երևանի մամուլի ակումբն իրականացնում է «Արցախցի լրագրողների ինտեգրումը Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է Արցախից բռնի տեղահանված լրագրողների ինտեգրմանը հայաստանյան մեդիա միջավայրում:[31] Ծրագիրը մեկնարկել է 2023 թվականի նոյեմբերին և շարունակվում է մինչ օրս: Ծրագրի ընթացքում ընտրված 16 արցախցի լրագրողները մասնակցել են 3 սեմինարի Հայաստանի 3 քաղաքներում՝ ծանոթանալով հայաստանյան մեդիա միջավայրի էթիկական, իրավական առանձնահատկություններին և շփվել լրատվամիջոցների ղեկավարների հետ: Ծրագրի մասնակիցների մի մասին ենթադրամաշնորհային մրցույթի արդյունքում տրամադրվել է աջակցություն լրագրողական նախագծեր իրականացնելու համար: Հաջորդ փուլում Երևանի մամուլի ակումբը ենթադրամաշնորհներ է տրամադրելու մրցույթում հաղթած 7 կազմակերպություններին, որոնք իրենց ներկայացրած նախագծերում կներգրավեն առնվազն մեկ արցախցի լրագրողի: Ենթադրամաշնորհային ծրագիրը կշարունակվի առավել հաջողած կազմակերպությունների հետ:

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը 2023 դեկտեմբեր – 2024 ապրիլ ամիսներին իրականացրել է «Աջակցություն արցախցի վարպետներին» ծրագրի պիլոտային փուլը: Ծրագրի շրջանակներում 102 արցախցի վարպետների տրամադրվել են գործիքներ իրենց աշխատանքը ՀՀ–ում վերսկսելու նպատակով: Բացի այդ, 28 շահառու մասնակցել է

[30] Էլեկտրոնային հաղորդակցություն կազմակերպության ներկայացուցիչների հետ:
[31] Էլեկտրոնային հաղորդակցություն կազմակերպության ներկայացուցիչների հետ:

մասնագիտական վերապատրաստման դասընթացների: Ծրագրի ընթացքում 102 շահառուներից 89-ն ապահովվել է աշխատանքով: Կազմակերպությունն առաջիկայում նախատեսում է նոր փուլի հայտերի ընդունման գործընթաց:[32]

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն տարբեր մարզերում և Երևանում իրականացնում է մի շարք ծրագրեր, այդ թվում՝ «Ձեռնարկատիրության դպրոց Արցախից տեղահանված կանանց համար», «Տեղահանված երիտասարդների տնտեսական հզորացում», «Ապահով տարածք Լեռնային Ղարաբաղից տեղահանված երիտասարդների համար», Զբաղվածության և ձեռնարկատիրության խթանման ծրագրերը: Այս ծրագրերն ունեն ընդհանուր նպատակ՝ ձեռնարկատիրական հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացների միջոցով զարգացնել տեղահանված անձանց բիզնես մտածողությունը, նորարարական գաղափարների գեներացման կարողությունը, ֆինանսական պլանավորման, դրամաշնորհների հայթայթման, աշխատաշուկայում դիրքավորման, ինչպես նաև մարքետինգային գործիքների հետ աշխատելու հմտությունները: Մասնակիցներին տրամադրվում է նաև անհատական բիզնես խորհրդատվություն և ուղղորդում:

«Միտք» ՀԿ-ն տեղահանված անձանց համար իրականացրել է 2 ծրագիր՝ «Ավելի լավ ապագա տեղահանված անձանց համար» և «Բարեկեցիկ ապագա նոր համայնքում»: Ծրագրերի նպատակն է օժանդակել Արմավիրի մարզում ապաստանած 2000-ից ավելի արցախցիների ինտեգրմանը: Ծրագրի շրջանակներում հիմնական գործողությունները ներառում էին ինտերիեր դիզայնի և ծրագրերի կառավարման ուղղվածությամբ մասնագիտական դասընթացների կազմակերպումը, դասընթացների մասնակիցներին առկա աշխատաշուկային և ՀՀ աշխատանքային օրենսդրությանը ծանոթացումը, աշխատանքային դիմումների ու հարցազրույցների պատրաստման հարցերում աջակցությունը, գործընկեր կառույցների և նոր գործատուների հետ պայմանավորվածությունների ձեռքբերումը փորձնակության ծրագրի համար, փորձնակության ծրագրի իրականացումը լավագույն շրջանավարտների համար, լավագույն 5 շրջանավարտներին աշխատանքային տեխնիկական միջոցների (համակարգիչներ, գաջեթներ և այլն) տրամադրումը և այլն:

Ընդհանուր առմամբ, միջազգային դոնորների ֆինանսավորմամբ ՀԿ-երի կողմից իրականացվող նման ծրագրերն ու դրանց շարունակականությունը կարևոր են բռնի տեղահանված անձանց շրջանում գործազրկության մակարդակը կրճատելու ու վերջիններիս ինքնուրույն վաստակն ապահովելու համար: Պետության կողմից իրականացվող դրամաիրային աջակցության միջոցառումները դադարեցվելու պարագայում բռնի տեղահանված անձինք պետք է ունենան եկամուտի սեփական աղբյուրներ, ինչը հնարավոր է վերամասնագիտացման, ձեռնարկատիրության խթանման և աշխատանքային փորձի ձեռքբերման շարունակական ծրագրերի միջոցով:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ, 2024 թ. մայիսին Ծաղկաձորում իրականացրել է աշխատաժողով բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող աշխատողների՝ «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար: Աշխատաժողովի նպատակն էր «Վերածնունդ» արհեստակցական

[32] Մենք ենք մեր սարերը զարգացման գործակալություն, Աջակցություն արցախցի վարպետներին, https://ourmountains.am/hy/project/support-for-artsakh-craftsmen, (դիտված՝ 08.08.2024 թ.):

կազմակերպության անդամներին ծանոթացնել գործող զբաղվածության ծրագրերին և մշակել քայլեր՝ ուղղված բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց զբաղվածության կարիքների գնահատմանը և ըստ ունեցած մասնագետների և աշխատաշուկայի կարիքների համադրմանը: Մասնակիցները նաև հնարավորություն ունեցան ծանոթանալու ՀՀ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին և ապագայի հմտություններին, ինչպես նաև ձեռք բերելու աշխատանքի դիմելու, այդ թվում՝ գրագետ ինքնակենսագրական կազմելու հմտություններ:[33]

Առևտրային կազմակերպությունների ծրագրեր

Արցախցիների բռնի տեղահանումից և Հայաստան տեղափոխվելու առաջին իսկ օրերից մի շարք մասնավոր կազմակերպություններ հանդես են եկել զբաղվածության ապահովման ծրագրերով:

Ամերիաբանկը հոկտեմբեր/նոյեմբեր ամիսներին մեկնարկել էր «Ամերիա Սերունդ. Արցախ» ուսումնական ծրագիրը, որի նպատակն էր կիսվել գիտելիքով և փորձառությամբ: Ամերիաբանկի կողմից առաջարկվող կրթական ծրագրի անհրաժեշտ փուլերը հաջողությամբ անցնելուց հետո 18-35 տարեկան մասնակիցները հնարավորություն էին ունեցել շարունակելու իրենց մասնագիտական ուղին, աշխատելու ոլորտի պրոֆեսիոնալների հետ և միանալու Ամերիաբանկին կամ աշխատելու այլ կազմակերպություններում: Ծրագրի մասնակիցները պետք է 1,5 ամիս մասնագիտական ինտենսիվ ուսուցում անցնեին Երևանում՝ այդ ընթացքում ստանալով ամսական 200,000 ՀՀ դրամ (ներառյալ եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները), ծրագրի վերջում ստանալով հավաստագիր մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքի հնարավորություն Ամերիաբանկում:[34]

Այ Դի Բանկը 2023 թ. աշնանը՝ սեպտեմբեր/հոկտեմբեր ամիսներին, իրականացրել էր #IDream ծրագիրը[35] – հատուկ Արցախից բռնի տեղահանված երիտասարդների համար «Հիմա՝ ավելի, քան երբեք անհրաժեշտ է կրթվել, ձեռք բերել նոր գիտելիքներ և արագ ու հնարավորինս քիչ կորուստներով ընդունել նոր իրականության մարտահրավերները» կարգախոսով: Ծրագրի տևողությունը 2-3 ամիս էր, որի շրջանակներում մասնակիցները ուսանում էին բանկի մասնաճյուղերում: IDream ծրագիրը հնարավորություն էր տալիս երիտասարդներին ձեռք բերել տեսական և գործնական մի շարք գիտելիքներ վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում: Ծրագիրը նպատակ ուներ սկսնակ մասնագետներին տրամադրել տեսական գիտելիքներ ֆինանսավարկային ոլորտի վերաբերյալ, զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են բանկային ոլորտում սկսնակ աշխատակցին, ծանոթացնել Այ Դի Բանկի գործունեությանն ու կորպորատիվ մշակույթին, ծրագրի լավագույն մասնակիցներով համալրել բանկում սկսնակ մասնագետների թափուր հաստիքները: Ծրագրին մասնակցել կարող էին բակալավրի կամ մագիստրատուրայի կամ նորավարտ ուսանողները, որոնք

[33] ՀԱՄԿ, Աշխատաժողով «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար https://hamk.am/ashkhatazhokhov-%D5%99%D5%99veratsnund-arhestaktsakan-kazmakerputyan-andamneri-hamar, (դիտված՝ 08.07.2024 թ.):
[34] Ամերիա բանկ, https://ameriabank.am/career/generation , (դիտված՝ 08.07.2024 թ.):
[35] ԱյԴԻ բանկ, https://shorturl.at/RPUNR , (դիտված՝ 08.07.2024 թ.):

թվային բանկինգի ոլորտում կարիերա սկսելու ցանկություն, հաղորդակցման լավ հմտություններ ունեին:

Արմենիան կոդ ակադեմին 2023 թ. հոկտեմբերին տրամադրել էր 50 կրթաթոշակ ընդունելության փուլերն անցած դիմորդների համար 5 ամենապահանջված ուղղություններում, այդ թվում՝ JavaScript և Python ծրագրերի ներածական դասընթացներ, Data Science և Machine Learning ներածական դասընթաց, UX/UI և գրաֆիկ դիզայն:[36]

[36] Armenian Code Academy, https://how2b.am/armenian-code-academy-anvchar-daser-arcaxcinerin/ , (դիտված՝ 08.07.2024 թ.):

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Միջազգային հաջողված փորձի օրինակներ

Միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են Նիդերլանդներում, մասնավորապես՝ Ամստերդամի քաղաքապետարանի կողմից իրականացվող փախստականների ինտեգրման և զբաղվածության ապահովման ծրագրերն ու ընդհանուր համակարգը: Այս ծրագրերը ունեն ընդհանուր բաղադրիչներ ՀՀ-ում ներդրված ծրագրերի հետ և կարող են նպաստել դրանց զարգացմանը: Նմանատիպ ընդհանրություններ կարելի է գտնել նաև Գերմանիայի կողմից իրականացվող ծրագրերում, որոնք նույնպես կարող են աջակցել ՀՀ-ում զբաղվածության, հատկապես փախստականների զբաղվածության ապահովման հատուկ ծրագրերի մշակմանը:

Նիդերլանդներ. Ամստերդամի քաղաքապետարան

Ամստերդամի քաղաքապետարանը մշակել է փախստականների ինտեգրման հատուկ ռազմավարություն/ծրագիր՝ ներառելով աշխատանքի շուկայում ինտեգրումը, այսպես կոչված, «Amsterdamse aanpak statushouders en inburgering»: Քաղաքապետարանի՝ փախստականների ինտեգրման ծրագիրն ունի 3 հիմնական սկզբունք՝

1. առաջնային աջակցություն՝ վաղ փուլերից սկսած,
2. ինտենսիվ աջակցություն (մասնագետների թիմի կողմից՝ տարբեր գործիքների միջոցով),
3. անհատականացված աջակցություն (յուրաքանչյուր փախստականի կամ փախստականների խմբի հատուկ հանգամանքների ու կարիքների հիման վրա):

Աջակցության ծրագիրը պարբերաբար գնահատվում է փախստականների հետ հետադարձ կապի միջոցով մասնագիտական խմբի կողմից:

Ինտեգրման ծրագրի տարրերը

Ինտեգրման ամբողջ ծրագրի ընթացքում փախստականները ստանում են գործազրկության նպաստ, ինչպես և աշխատանք փնտրող այլ անձինք, որոնք օգտվում են զբաղվածության պետական ծրագրերից: Փոխարենը փախստականից պահանջվում է ակտիվորեն մասնակցել ինտեգրման ծրագրին:

Ծրագրի մեկնարկին փախստականի հետ անցկացվում է խորը հարցազրույց՝ գնահատելու փախստականի կարիքները և բացահայտելու անձնական հանձնագամանքները, որի հիման վրա մշակվում է անհատականացված ինտեգրման պլան (Personlised Integration Plan[37]) և համապատասխան գործիքներ են ընտրվում աշխատանքի աջակցության համար: Երբ փախստականը հաջողությամբ ավարտում է իր ինտեգրման ծրագիրը, նախատեսվում է վերջնական գնահատման հանդիպում:

Ծրագրի իրականացման ընթացքում փախստականին կցվում է «Աջակցության համակարգող»՝ (Support Coordinator) որպես հիմնական կոնտակտային անձ, որը ներգրավում է համապատասխան մասնագետների և կիրառում է զբաղվածության ապահովման համար անհրաժեշտ գործիքները: Գործում է գործատուների հետ կապի

[37] Wet inburgering 2021 Engels - YouTube , (դիտված՝ 06.06.2024 թ.):

ապահովման հատուկ բաժին («WerkgeversServicePunt»), որն իր համակարգողների (account managers) միջոցով կապ է հաստատում գործատուների և գործազուրկների, այդ թվում՝ խոցելի խմբերի աշխատանք փնտրողների միջև, ինչպիսիք են փախստականները, տարեցները (50+) և հաշմանդամություն ունեցող անձինք: Համակարգողները ակտիվորեն աշխատանք են փնտրում՝ համագործակցելով գործատուների հետ այդ թվում՝ նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով: Գործատուների հետ կապի ապահովման հատուկ բաժինը կարող է կիրառել տարբեր գործիքներ և սուբսիդիաներ գործատու-աշխատող արդյունավետ համընկնումների ժամանակ:

Ըստ ընթացակարգի՝ ստեղծվում է անձնական տվյալների թվայնացված ֆայլ, որը պարբերաբար թարմացվում է՝ ներառելով ինֆորմացիա ինտեգրման յուրաքանչյուր փուլի վերաբերյալ: Տվյալների ֆայլը նաև պարունակում է տեղեկատվություն (ի թիվս այլ տեղեկատվության) փախստականի աշխատանքային փորձի, կրթության, հմտությունների, լեզուների իմացության, աշխատանքի նախընտրելի տեսակի, աշխատանքի դիմումների և այլնի վերաբերյալ:

Ինտեգրման ծրագրի՝ զբաղվածության ապահովման ամենակարևոր գործիքները

Գործատուների ներգրավման համար հետևյալ քայլերն ու միջոցներն են ձեռնարկվում՝

Բացասական կարծրատիպերի հաղթահարման միջոցներ. ձեռնարկվում են խոցելի խմբերի ներկայացուցիչներին աշխատանքի ընդունելու նպատակով, որոնք ուղղված են գործատուների մոտ առկա բացասական կարծրատիպերի վերացմանը: Մասնավորապես գործատուներին խրախուսվում է աշխատանքի ընդունման գործընթացում առաջնորդվել բազմազանության և ներառականության սկզբունքներով՝ կենտրոնանալով աշխատանք փնտրողների տաղանդների և կարողությունների վրա՝ ոչ թե սահմանափակումների: Բնականաբար, գործատուների հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով տրամադրվում են ֆինանսական փոխհատուցումներ և այլ արտոնություններ:

Աշխատանքի ժամանակավոր սուբսիդավորում. գործատուն աշխատանք փնտրողին առաջարկում է աշխատատեղ՝ նախնական ուսուցմամբ և աջակցմամբ, որի համար քաղաքապետարանը առաջարկում է ժամանակավոր սուբսիդավորում՝ առավելագույնը 1 տարի ժամկետով:

Անվտանգ ապահովագրություն. առաջարկվում է ֆինանսական փոխհատուցում գործատուին հաշմանդամություն ունեցող աշխատողի արտադրողականության նվազման կամ հիվանդության դեպքում: Այս սուբսիդիան նվազեցնում է այն ռիսկերը, որոնց կարող են բախվել գործատուները հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելիս:

Աշխատանքի ընդունում փորձաշրջանով. գործատուն աշխատանքի է ընդունում փախստականին փորձաշրջանով, որի նպատակն է երկուստեք գնահատել աշխատանքի համապատասխանությունը աշխատողի կարողություններին և հակառակը: Այս գործիքը նախատեսված է քիչ աշխատանքային փորձ ունեցող գործազուրկների համար: Փորձաշրջանի ընթացքում գործատուն լրացուցիչ սուբսիդիաներ է ստանում համայնքից: Հաջող փորձաշրջանից հետո գործատուն համաձայնում է աշխատանքի ընդունել փորձաշրջան անցած աշխատողին առնվազն մեկ տարի ժամկետով:

Ուսուցում, կրթություն, ուսուցում աշխատավայրում. ծրագիրը նախատեսված է աշխատավայրում նոր մասնագիտություն և փափուկ հմտություններ ձեռք բերելու համար, որը հաճախ համաֆինանսավորվում է գործատուի և կառավարության կողմից: Ծրագրի հաջող ավարտի դեպքում գործատուն հաճախ առաջարկում է աշխատանքային պայմանագիր կնքել տվյալ աշխատողի հետ: Ամստերդամի քաղաքապետարանն առաջարկում է նաև վերապատրաստման իր սեփական ծրագիրը, որը կոչվում է AmsterdamWerkt!: Վերջինիս ընթացքում մասնակիցները ձեռք են բերում հիմնական մասնագիտական հմտություններ և աշխատանքային փորձ՝ անցնելով կարճաժամկետ պրակտիկայի ծրագիր:

Աշխատատեղերի համապատասխանեցման և աշխատատեղերի ստեղծման նպատակով իրականացվում են հետևյալ լրացուցիչ միջոցները՝

«Աշխատանք որսողները» (Job hunters) օգնում են փախստականին աշխատանք գտնելու, դիմում-նամակներ գրելու և աշխատանքային հարցազրույցներին նախապատրաստելու հարցում: «Աշխատանք որսողներն» ունեն գործատուների մեծ ցանց:

Աշխատանքի ձևափոխում (Job carving). ստեղծվում են նոր աշխատանքային պրոֆիլներ՝ տարբեր պարտականությունների համադրմամբ, որոնք կարող են ավելի հեշտ իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից, օրինակ՝ վարչական կամ այլ օժանդակ պարտականություններ: Սա կարող է «թեթևացնել» ներկա աշխատակիցների աշխատանքը ոչ մասնագիտական, տեխնիկական պարտականություններից, ինչի շնորհիվ նրանք կկարողանան ավելի շատ կենտրոնանալ իրենց հիմնական խնդիրների վրա:

Աշխատանքի տոնավաճառներ, որոնք ծառայում են որպես ոչ պաշտոնական հարթակ աշխատող-գործատու կարիքների համապատասխանեցման համար: Այստեղ գործատուներն ու աշխատանք փնտրողները կարող են հանդիպել և ուսումնասիրել համագործակցության հնարավորությունները:

Տեղեկատվական կենտրոններ, որտեղ փախստականները կարող են աջակցություն ստանալ ինտեգրման հարցերի վերաբերյալ և հանդիպումներ ունենալ գործատուների հետ:

Համապատասխանեցման թվային գործիքների միջոցով «հմտությունների անձնագիր» է ստեղծվում գործատու-աշխատող ավելի արդյունավետ համագործակցության և կարիքների համընկնումները բացահայտելու համար:

Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատավայրերում իրականացվում է հավելյալ աջակցություն՝ հետևյալ միջոցներով՝

Աշխատանքային մարզիչներ. մասնագիտացված մենթորներ են, որոնք աշխատավայրում աջակցում են են հաշմանդամություն ունեցող աշխատողին առաջադրանքների կատարման հարցում, հոգեբանորեն աջակցում նրան, վերացնում աշխատանքային խոչընդոտները, տեղեկացնում և աջակցում գործատուին: Նրանք ժամանակավորապես օգնում են աշխատողին ինտեգրվել աշխատանքային միջավայրում, ձեռք բերել աշխատանքային ռիթմ և զարգացնել ինքնավստահությունը:

Աշխատանքի (վայրի) հարմարեցում. հաշմանդամություն ունեցող որոշ մարդիկ կարող են աշխատել միայն որոշակի ժամաքանակով կամ խիստ վերահսկվող միջավայրում կամ կարիք ունեն որոշակի (տեխնոլոգիական) օգնության՝ կատարելու իրենց առաջադրանքները:

Սոցիալական աշխատանքի վայրեր. հաշմանդամություն ունեցող որոշ մարդիկ (դեռևս) չեն կարողանում աշխատել սովորական գործատուի մոտ, և այդ պատճառով նրանց առաջարկվում է աշխատանք (խիստ սուբսիդավորվող) «սոցիալական աշխատանքի վայրում» **(**social work place**)**: Այս աջակցության նպատակն է օգնել այդ անձանց կատարելագործվել և բարձրացնել արտադրողականությունը, որպեսզի նրանք ի վերջո կարողանան ինտեգրվել աշխատաշուկային:

Փախստականների աշխատանքի շուկայում ինտեգրմանը աջակցող այլ բաղադրիչներից են՝

«Ֆինանսական բեռնաթափում». ֆինանսական ինքնաբավությունը խթանելու և ֆինանսական դժվարությունների մեջ չհայտնվելու համար քաղաքապետարանի մասնագետներն աջակցում են փախստականներին, օրինակ՝ վարձավճարների, ապահովագրությունների համար վճարումների միջոցով:

Կանանց հզորացմանն ուղղված ուսուցման ծրագիր. ծրագիրն ուղղված է՝ խթանելու միայնակ կանանց ինքնաբավությունը և սոցիալական մասնակցությունը, ինչպես նաև կանխելու սոցիալական մեկուսացումը:

Քաղաքապետարանի զբաղվածության ծրագրերում ներգրավված մասնագետներն են՝

- **«Աջակցության համակարգողը» (Support coordinator)** պատասխանատու է փախստականի ընդհանուր աջակցության համար ողջ ծրագրի ընթացքում՝ համակարգելով, թե որ մասնագետներն ու գործիքներն են կիրառելի փախստականի կամ փախստականների խմբի համար:
- **Աշխատանք «որսողը» (job hunter)** օգնում է փախստականին աշխատանք գտնելու, դիմում-նամակներ գրելու և աշխատանքի հարցազրույցներին պատրաստվելու հարցում:
- **Աշխատանքային մարզիչը (Job coach)** մասնագիտացված ժամանակավոր մենթոր է աշխատավայրում, որը օգնում է հաշմանդամին առաջադրանքների կատարման հարցում, հոգեբանորեն աջակցում, վերացնում է աշխատանքային խոչընդոտները և տեղեկացնում ու աջակցում է գործատուին: Աշխատանքային մարզիչներն օգնում են աշխատողին ինտեգրվել աշխատավայրում, ձեռք բերել աշխատանքային ռիթմ և ինքնավստահություն:
- **Համակարգողները (Account Managers)** դիմում են գործատուներին և աշխատում են գործատուների հետ աշխատատեղեր ստեղծելու և ուսուցում աշխատանքի միջոցով (learning on-the-job) կազմակերպելու համար: Գործատու-աշխատող հաջող համընկնման ապահովման համար համակարգողները կարող են կիրառել տարբեր գործիքներ և սուբսիդիաներ, ինչպես նաև օգտագործել փախստականի անձնական տվյալների ֆայլը:
- **Փորձառու փորձագետները (Expert by experience)** նախկին փախստականներն են, որոնք ծառայում են որպես օրինակ և ընկեր, օգնում են նոր փախստականներին գտնել իրենց ճանապարհը հասարակության մեջ, կապել նրանց սոցիալական ցանցերի հետ և կիսվել տեղեկություններով ինտեգրման հաջող փորձի վերաբերյալ:

- **Սոցիալական օգնականների (Social assistants)** խնդիրն է աջակցել փախստականներին տեղական (նրա բնակությանը մոտ) կյանքի տարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ բնակարանը, առողջությունը, պարտքերը և ընդհանուր ինտեգրումը, և, անհրաժեշտության դեպքում, սոցիալական օգնականը կարող է աջակցության հարցում ներգրավել այլ մասնագետների:

Գերմանիա. Հմտությունների և որակավորումների բացահայտում, գնահատում և ճանաչում. «MYSKILLS» գործիքը

2015–2016 թվականներին Գերմանիայի զբաղվածության պետական ծառայությունը Բերտելսման հիմնադրամի (ոչ առևտրային կազմակերպություն, որը ֆինանսավորում և զարգացնում է սոցիալական նախագծերը) հետ սկսեց մշակել պրագմատիկ և հեշտ իրագործելի գործիք, որը կոչվում է MYSKILLS: Նպատակն էր տեսանելի դարձնել մեծ թվով փախստականների և ապաստան հայցողների չփաստաթղթավորված մասնագիտական հմտություններն ու կարողությունները գերմանական աշխատաշուկային ինտեգրումը հեշտացնելու համար: MYSKILLS գործիքը մշակվել է որպես ինտերակտիվ, համակարգչային գործիք պաշտոնական որակավորում չունեցող անձանց մասնագիտական հմտությունները ստուգելու համար: Պատկերներով և տեսանյութերով աջակցվող տեխնոլոգիայի վրա հիմնված թեստերը հասանելի են 6 լեզուներով (անգլերեն, գերմաներեն, ժամանակակից ստանդարտ արաբերեն, նոր պարսկերեն, ռուսերեն և թուրքերեն): Պատկերները ցույց են տալիս կոնկրետ աշխատանքային գործողություններ իրական կյանքում:[38]

MYSKILLS առցանց գործիքը կարևոր է, քանի որ թեստի արդյունքները կարող են կցվել աշխատանքի դիմումներին գործատուին թեկնածուի մասնագիտական գիտելիքների վերաբերյալ արագ ակնարկ տալու համար: Հանրային զբաղվածության ծառայությունների համար այն օգտակար է, քանի որ կարող է բարելավել գործատու-աշխատող համապատասխանությունը՝ առաջնորդվելով աշխատանք փնտրողի ներուժով, ինչպես նաև աշխատանքային պահանջների համապատասխանությամբ, որով Հանրային զբաղվածության ծառայությունները փնտրում են թեկնածուներ՝ ելնելով գործատուների հատուկ կարիքներից:

[38] EuroFound: Role of public services in integrating refugees and asylum seekers (2019), https://www.eurofound.europa.eu/en/publications/2019/role-public-services-integrating-refugees-and-asylum-seekers (դիտված՝ 25.09.2024 թ.)

.

Գրականության ցանկ

Իրավական ակտեր

- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194077
- ՀՀ օրենքը «Ոստիկանությունում ծառայության մասին», ընդունված՝ 2002 թվականի հուլիսի 3-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190384
- ՀՀ օրենքը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», ընդունված՝ 2003 թվականի դեկտեմբերի 17-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172160 ՀՀ օրենքը «Փախստականների և ապաստանի մասին», ընդունված՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=48710
- ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», ընդունված՝ 2009 թվականի հուլիսի 10-ին ,https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
- ՀՀ օրենքը «Զբաղվածության մասին», ընդունված՝ 2013 թվականի դեկտեմբերի 11-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190352
- ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977
- ՀՀ օրենքը «Քաղաքացիական ծառայության մասին», ընդունված՝ 2018 թվականի մարտի 23-ին . https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193796
- ՀՀ օրենքը «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, ընդունված՝ 2024 թվականի հուլիսի 12-ին , https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195397
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի » N 1062-Ն որոշում «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100589
- ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1179-L որոշում «Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագիրը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166654
- ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1756-L որոշում «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183992
- ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշում «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին», https://www.arlis.am/documentView.aspx?docid=184503
- ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 57-L որոշում «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ

ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188722

- ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 20-ի N 947-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 57-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194223
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ գյուղատնտեսության նախարարի համատեղ 2014 թ. հունիսի 18-ի N 74-Ն համատեղ հրաման «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման զբաղվածության պետական ծրագրի համատեղ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109702

Հետազոտություններ

- APR Group, Հայաստանում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքներ, 2024 թ., https://aprgroup.org/images/Library/Artsakh_Q.pdf
- EuroFound: Role of public services in integrating refugees and asylum seekers (2019), https://www.eurofound.europa.eu/en/publications/2019/role-public-services-integrating-refugees-and-asylum-seekers
- People in Need, Multisectoral assessment report on the challenges and needs of the population forcibly displaced from Nagorno-Karabakh in Autumn 2023 Prepared by the People in Need Armenia, March 2024, https://armenia.peopleinneed.net/media/publications/2257/file/pin-need-assessment-report_2024.pdf
- UNICEF-USAID և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված տեղեկատվական թերթիկ՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար, https://shorturl.at/b5421

Հոդվածներ, հայտարարություններ

- «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալություն, Աջակցություն արցախցի վարպետներին, https://ourmountains.am/hy/project/support-for-artsakh-craftsmen
- «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի պաշտոնական ֆեյսբուք էջ, https://www.facebook.com/share/wWEqkyAUARPZrBZX/
- Armenian Code Academy-ն SS անվճար դասընթացներ կտրամադրի արցախցիներին, https://how2b.am/armenian-code-academy-anvchar-daser-arcaxcinerin/
- Ամերիա բանկ, https://ameriabank.am/career/generation
- ԱյԴԻ բանկ, https://shorturl.at/RPUNR
- Կարմիր խաչի և կարմիր մահիկի ֆեդերացիա, https://shorturl.at/aITaV
- ՀԱՄԿ, Աշխատաժողով «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների համար https://shorturl.at/iwYQb
- ՀԲԸՄ, Սովորիր և վաստակիր. Արցախ, https://agbu.am/leap

- Հետք, 500 արցախցի աջակցություն կստանա աշխատանքային փորձ ձեռք բերելու համար, 20 հունիսի 2024 թ., https://hetq.am/hy/article/167544
- Հետք, Կառավարությունը ներկայացրել է Արցախից բռնի տեղահանվածների համար ՀՀ քաղաքացիություն ստանալու կարգը, 27 մայիսի 2024 թ., https://hetq.am/hy/article/166899
- ՀՀ վարչապետի աշխատակազմ, Վարչապետին է ներկայացվել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի 2023 թ. գործունեության հաշվետվությունը, https://www.primeminister.am/hy/press-release/item/2024/06/20/Nikol-Pashinyan-meeting
- ՄԱԶԾ, մրցույթի հրավեր, https://armenia.un.org/hy/243973-%D5%B4%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9
- Փոխնախարար. շուրջ 20 հազար արցախցի աշխատանքի է տեղավորվել, մի քանի հարյուր մարդ դիմել է բնակարաններով ապահովման ծրագրին մասնակցելու համար, 10.07.2024 թ., https://finport.am/full_news.php?id=50738&lang=1

Կայքեր

- Միասնական սոցիալական ծառայություն, https://socservice.am/
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, https://mlsa.am/
- Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակի կայք՝ https://armenia.un.org/hy/
- ԵՄ արևելյան գործընկերների վերաբերյալ տեղեկատվական հարթակի կայք՝ https://euneighbourseast.eu/hy/
- How2B տեղեկատվական կայք՝ https://how2b.am